



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՉՈՐՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ 17(357) 17 հոկտեմբերի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
283	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-37-Ն օրենքը.....	4
284	«Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-38-Ն օրենքը.....	6
285	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-39-Ն օրենքը.....	7
286	«Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-40-Ն օրենքը.....	8
287	«Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-41-Ն օրենքը.....	9
288	«Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-42-Ն օրենքը.....	10
289	«Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-43-Ն օրենքը.....	11
290	«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-44-Ն օրենքը.....	13
291	«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-45-Ն օրենքը.....	14

	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
292	<p>«Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, տրանսպորտային միջոցի պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը, միաժամանակ տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցում և պետական հաշվառում իրականացնելու համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի ձևը, տրանսպորտային միջոցի պետական հաշվառման ազգային վկայագրի ձևը և նկարագիրը, տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագրի ձևը և նկարագիրը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի ձևը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող և (կամ) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման և հատկացման կարգը, Արցախի Հանրապետության Նախագահի, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, Արցախի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների, ինչպես նաև Արցախի Հանրապետության կառավարության անդամների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, օրենքով ստեղծված պետական մարմինների ղեկավարների, Ստեփանակերտի քաղաքապետի և Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմների ղեկավարների ծառայողական տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի նիշերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 28-ի N 897-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 817-Ն որոշումը.....</p>	15

293	«Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 44-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 834-Ն որոշումը.....	55
294	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 844-Ն որոշումը.....	56
295	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 845-Ն որոշումը.....	59

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
սեպտեմբերի 26-ին

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի ապրիլի 20-ի ՀՕ-30-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում, 11-րդ հոդվածի 3-րդ մասում, 13-րդ հոդվածի վերնագրում և 1-ին ու 2-րդ մասերում, 17-րդ հոդվածի 9-11-րդ մասերում, 20-րդ հոդվածի 22-րդ մասում, 22-րդ հոդվածի 3-րդ մասում, 23-րդ հոդվածի 1-ին մասում, 26-րդ հոդվածի 18-րդ մասում, 45-րդ հոդվածի 7-րդ մասում, 59-րդ հոդվածի 6-րդ մասում և 68-րդ հոդվածի 1-ին մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության արդարադատության» բառերով:

Հոդված 2. 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Արցախի Հանրապետության արդարադատության նախարարի սահմանած կարգով տեղեկություններ է հրապարակում իրավաբանական անձանց գրանցման և լուծարման մասին.»:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Գործակալություն դիմումներ և դիմումին կից փաստաթղթեր կարող են ներկայացվել էլեկտրոնային փաստաթղթի ձևով, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով՝ թղթային կրիչի վրա.»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Փաստաթղթերի պատճենները գործակալություն՝ նախնական ուսումնասիրության համար կարող են ներկայացվել ինչպես էլեկտրոնային ձևով, այնպես էլ թղթային կրիչի վրա.»:

Հոդված 5. Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասում «վերակազմակերպմամբ» բառից հետո լրացնել «(բացառությամբ վերակազմավորման դեպքերի)» բառերը:

Հոդված 6. Օրենքի 53-րդ հոդվածի 5-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության» բառերը փոխարինել «հարկային մարմնի կողմից» բառերով:

Հոդված 7. Օրենքի 61-րդ հոդվածի 7-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 8. Օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասում, 63-րդ հոդվածի 1-ին մասում և 65-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «արդարադատության» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության արդարադատության» բառերով:

Հոդված 9. Օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «միջոցով» բառից հետո լրացնել «կամ այլ եղանակով» բառերը:

Հոդված 10. Օրենքի 68-րդ հոդվածում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 6
Ստեփանակերտ
ՀՕ-37-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
սեպտեմբերի 26-ին

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-104 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի աղյուսակի 1-ին կետի «բ», «ե», «զ» և «թ» ենթակետերը, 2-րդ կետի «բ» ենթակետը, 3-րդ կետի «բ» ենթակետը և 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 26.1-ին և 27.1-ին կետերով.

«	26.1. պետական ռեզիստրի կողմից առևտրային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը մերժելու մասին առանձին որոշման տրամադրման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով	».
«	27.1. իրավաբանական անձանց պետական միասնական և պետական գրանցամատյաններից մեկ սուբյեկտի վերաբերյալ պետական ռեզիստրում պահվող և ինտերնետային կայքում տեղադրված ամբողջական տեղեկությունների, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենների տրամադրման համար	բազային տուրքի եռապատիկի չափով	»:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի աղյուսակի 28-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Մույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 6
Ստեփանակերտ
ՀՕ-38-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
սեպտեմբերի 26-ին

«ԱՎՏՈՍՈՒԿԻ ԼՍՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2007 թվականի հունիսի 20-ի ՀՕ-62 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունում «կազմակերպվում են» բառից հետո լրացնել «միջպետական կամ ներհանրապետական հաղորդակցություններում» բառերը:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական հաղորդակցությունում ուղևորափոխադրումները կազմակերպվում են ուղևորի անձնական կամ խմբային պատվերի հիման վրա՝ հաստատուն փոխադրավարձով:»:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասի «ա», «բ» և «դ» կետերի դրույթները չեն տարածվում մարդատար-տաքսի ավտոմոբիլով միջպետական հաղորդակցությունում փոխադրումներ իրականացնողների ավտոտրանսպորտային միջոցների վրա:»:

Հոդված 4. Օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերությունում «տաքսամետրի ցուցմունքով» բառերից հետո լրացնել «(բացառությամբ միջպետական հաղորդակցությունում կազմակերպվող փոխադրումների)» բառերը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 6
Ստեփանակերտ
ՀՕ-39-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
սեպտեմբերի 26-ին

«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-27 օրենքի (այսուհետ՝
Օրենք) 37-րդ հոդվածի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) թեթև մարդատար ավտոմեքենա է համարվում մինչև ինն ուղևորների
նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցը.»:

Հոդված 2. Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը
շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորների փոխադրման համար
հաստատագրված վճարի հաշվարկման ուղղիչ գործակիցներն են՝

1) ներհանրապետական փոխադրումներում՝

ա. Ստեփանակերտ քաղաքում՝ 3.0,

բ. այլ բնակավայրերում՝ 2.8.

2) միջպետական փոխադրումներում՝

ա. Հայաստանի Հանրապետության հետ՝ 5.0,

բ. այլ պետությունների հետ՝ 10.0:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 6
Ստեփանակերտ
ՀՕ-40-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
սեպտեմբերի 26-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-104 օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի «ե» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

ե) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ ներհանրապետական փոխադրումներում՝	
- մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով՝ տարեկան	բազային տուրքի 10-ապատիկի չափով
- մեկից ավելի մարդատար-տաքսի ավտոմոբիլներով՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
միջպետական փոխադրումներում՝	
- մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով՝ տարեկան	բազային տուրքի 20-ապատիկի չափով
- մեկից ավելի մարդատար-տաքսի ավտոմոբիլներով տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով

»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 6
Ստեփանակերտ
ՀՕ-41-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
սեպտեմբերի 26-ին

**«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության 2002 թվականի մարտի 28-ի ՀՕ-202 օրենքի
43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «15. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ
ԲՆԱԳԱՎԱՌ» բաժնում՝

1) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

5.	Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպում	ԿՄ	Բ	-	-	-	-	-	-
----	--	----	---	---	---	---	---	---	---

».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետ.

«

5.1	Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական ուղևորափոխադրումների կազմակերպում	ԿՄ	Բ	-	-	-	-	-	-
-----	---	----	---	---	---	---	---	---	---

»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի
հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 6
Ստեփանակերտ
ՀՕ-42-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
սեպտեմբերի 26-ին

**«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-91-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում «9-րդ և 10-րդ տողերով» բառերից հետո լրացնել «, իսկ 2019 թվականի հունվարի 1-ից հետո հավելվածի 3-րդ տողով» բառերը:

Հոդված 2. Օրենքի N 1 հավելվածի 12-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

12.	Թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրումների իրականացում*, այդ թվում՝				
1)	ներհանրապետական փոխադրումներում	20,0	18,0	15,0	
2)	ՀՀ հետ կապված միջպետական փոխադրումներում		30,0		

»:

Հոդված 3. Օրենքի N 2 հավելվածի 2-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2.	Թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրումների իրականացում*, այդ թվում՝				
1)	ներհանրապետական փոխադրումներում	x	20,0	18,0	15,0
2)	ՀՀ հետ կապված միջպետական փոխադրումներում	x		30,0	

»:

Հոդված 4. Օրենքի N 3 հավելվածի 12-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

12.	Թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրումների իրականացում, այդ թվում՝				
1)	ներհանրապետական փոխադրումներում				
2)	ՀՀ հետ կապված միջպետական փոխադրումներում				

»:

Հոդված 5. Օրենքի N 5 հավելվածի 12-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

12. Թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրումների իրականացում, այդ թվում՝			
1) ներհանրապետական փոխադրումներում			
2) ՀՀ հետ կապված միջպետական փոխադրումներում			

»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 6
Ստեփանակերտ
ՀՕ-43-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
սեպտեմբերի 26-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-68-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասում, 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերում, 2-րդ մասում, 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, 4-րդ հոդվածում, 5-րդ հոդվածի 4-րդ մասում, 6-րդ հոդվածի 3-րդ մասում, 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով՝ համապատասխան հոլովածներով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 5-րդ մասի 2-րդ կետով» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով կամ դադարել՝ Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով» բառերով, իսկ 7-րդ կետից հանել «վարչապետը» բառը:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասում, 6-րդ հոդվածի 4-րդ մասում «մանկավարժական» բառը փոխարինել «կրթական» բառով:

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «վարչապետի» բառը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 6
Ստեփանակերտ
ՀՕ-44-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
սեպտեմբերի 26-ին

**«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ»
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-167 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին, 2.1-ին, 3-րդ հոդվածներում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը համապատասխան հոլովածներով փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով՝ համապատասխան հոլովածներով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածից հանել «ն վարչապետի» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 6
Ստեփանակերտ
ՀՕ-45-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2018թ.

N 817-Ն

ք.Ստեփանակերտ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ, ՄԻՋՄԱՍՆԱԿ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ, «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՍ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ) ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԸ, «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՍ ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՍՊ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ (ԿԱՍ) «ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՍ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ) ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՂԱՍՊՆԵՐԻ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՕՐԵՆՔՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔՍՂԱՔՍՊԵՏԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՆԻՇԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N897-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» և «ժբ» կետերի և 13-րդ հոդվածի 1-ին և 24-րդ մասերի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ք ն շ ու մ է**.

1. Սահմանել՝
 - 1) պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը՝ համաձայն N2 հավելվածի.
 - 3) տրանսպորտային միջոցի պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի.
 - 4) տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) միաժամանակ տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցում և պետական հաշվառում իրականացնելու համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N5 հավելվածի.

6) տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) տրանսպորտային միջոցի պետական հաշվառման ազգային վկայագրի ձևը և նկարագիրը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագրի ձևը և նկարագիրը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի ձևը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող և (կամ) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը՝ համաձայն N 10 հավելվածի.

11) տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման ու հատկացման կարգը՝ համաձայն N 11 հավելվածի.

12) Արցախի Հանրապետության Նախագահի, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, Արցախի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների, ինչպես նաև Արցախի Հանրապետության կառավարության անդամների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, օրենքով ստեղծված պետական մարմինների ղեկավարների, Ստեփանակերտի քաղաքապետի և Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարների ծառայողական տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի նիշերը՝ համաձայն N12 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) եթե «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և սույն որոշմամբ սահմանված տրանսպորտային միջոցների պետական հաշվառման գործողությունները կատարվում են միաժամանակ, ապա դրանք իրականացվում են որպես մեկ միասնական գործողություն, որի դեպքում ներկայացվում են սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված ցանկով նախատեսված փաստաթղթերը.

2) սույն որոշմամբ սահմանված կարգով չհաշվառվելու (միայն տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցվելու), տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանվելու, ինչպես նաև խոտանման հիմքով տրանսպորտային միջոցը հաշվառումից հանվելու դեպքում համապատասխան տրանսպորտային միջոցը համարվում է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր

ապահովագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի իմաստով պետական հաշվառումից հանված (չհաշվառված)։

3) տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցվելու, սակայն չհաշվառվելու դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) տրանսպորտային միջոցը կայանման վայր տեղափոխելու համար տրվում են մեկօրյա ժամկետով «Ժամանակավոր» համարանիշեր։

4) տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված, սակայն չհաշվառված տրանսպորտային միջոցը պետական գրանցումից հանելու կամ հաշվառման ներկայացնելու նպատակով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) տրանսպորտային միջոցը կայանման վայրից տեղափոխելու համար տրվում են մեկօրյա ժամկետով «Ժամանակավոր» համարանիշեր՝ տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի հիման վրա։

5) Ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական ստորաբաժանումը տրանսպորտային միջոցի պետական գրանցման և պետական հաշվառման գործողություններ կատարելիս տվյալ գործողության կատարմանը նախորդող ժամանակահատվածի համար ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրի կամ կտրոնի առկայությունը չեն ստուգում։

6) Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին պատկանող հափշտակված տրանսպորտային միջոցները՝ հետախուզում հայտարարվելու դեպքում սահմանված կարգով ժամանակավոր (մինչև հայտնաբերումը) դուրս են գրվում տվյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ կազմակերպության հաշվեկշռից։

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 28-ի «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի, պետական հաշվառման ազգային ու միջազգային վկայագրերի և «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրի ձևերը, ինչպես նաև «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 1-ի թիվ 259-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N897-Ն որոշումը։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը։

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Ց Ա Ն Կ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

1. Պետական գրանցման ենթակա են Արցախի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթնեկելու համար նախատեսված՝

1) 50 սանտիմետր խորանարդից ավելի բանվորական ծավալով շարժիչ կամ չորս կիլովատտ-ժամից ավելի հզորությամբ էլեկտրական շարժիչ ունեցող և 50 կիլոմետր-ժամից ավելի առավելագույն արագություն զարգացնող՝

- ա. մոտոցիկլները,
- բ. տրիցիկլները և քվադրոցիկլները,
- գ. թեթև մարդատար ավտոմոբիլները,
- դ. բեռնատար ավտոմոբիլները,
- ե. ավտոբուսները.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված տրանսպորտային միջոցների կցորդները (կիսակցորդները):

2. Սույն ցանկի 1-ին կետում նշված տրանսպորտային միջոցներից բացառություն են կազմում (չեն գրանցվում)՝

- 1) մրցարշավային տրանսպորտային միջոցները.
- 2) ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներից դուրս՝ փակ տարածքներում շահագործվող տրանսպորտային միջոցները.
- 3) առանձին մասերից և պահեստամասերից հավաքված (բացառությամբ ինքնաշեն), ինչպես նաև աջակողմյան տեղաբաշխմամբ ղեկային համակարգ ունեցող տրանսպորտային միջոցները.

4) ճանապարհային ոստիկանությունում գրանցված, հաշվառված և գրանցումից, հաշվառումից չհանված տրանսպորտային միջոցները (միայն սեփականության իրավունքի մասով):

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑՑՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Արցախի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության համար նախատեսված Արցախի Հանրապետության օրենսդրությամբ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ հանդիսացող անձանց սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների պետական հաշվառման, տրանսպորտային միջոցները հաշվառումից ժամանակավոր հանելու և հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցների հաշվառումը վերականգնելու, ինչպես նաև տրանսպորտային միջոցների հաշվառման միջազգային վկայագիր տալու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով տրանսպորտային միջոցների հաշվառման գործողություններ են համարվում տրանսպորտային միջոցների (բացառությամբ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Արցախի Հանրապետություն ներմուծված)՝

- 1) հաշվառումը.
- 2) վերահաշվառումը.
- 3) հաշվառումից հանումը:

3. Հաշվառման գործողությունները կատարվում են Արցախի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) հաշվառման-քննական ստորաբաժանման (այսուհետ՝ հաշվառման ստորաբաժանում) կողմից:

4. Տրանսպորտային միջոցները հաշվառվում են տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված սեփականատերերի անվամբ, բացառությամբ իրավաբանական անձանց, Արցախի Հանրապետությանը կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող, սակայն դրանց կողմից ստեղծված իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների (հիմնարկ, պետական մարմին, իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություններ) կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների, որոնք հաշվառվում են դրանք շահագործող կազմակերպությունների անվամբ (ֆիզիկական անձանցից բացի մյուս սուբյեկտները, այսուհետ՝ կազմակերպություններ), ինչպես նաև ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալությամբ տրվող տրանսպորտային միջոցների, որոնք հաշվառվում են վարձակալի անվամբ:

5. Ֆիզիկական անձի անվամբ տրանսպորտային միջոցը հաշվառվում է ըստ նրա հաշվառման, իսկ դրա բացակայության դեպքում՝ ժամանակավոր հաշվառման, իսկ վերջինի բացակայության դեպքում՝ փաստացի բնակության վայրի:

6. Կազմակերպության անվանմամբ տրանսպորտային միջոցը հաշվառվում է ըստ դրա գտնվելու վայրի, իսկ կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների տրանսպորտային միջոցները՝ կազմակերպության անվանմամբ՝ որպես գտնվելու վայր նշելով առանձնացված ստորաբաժանման գտնվելու վայրը:

7. Անհատ ձեռնարկատերերին պատկանող տրանսպորտային միջոցները հաշվառվում են որպես ֆիզիկական անձանց անվամբ հաշվառվող տրանսպորտային միջոցներ:

8. Հաշվառման ստորաբաժանման իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են օժանդակել և աջակցություն ցույց տալ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին), ինչպես նաև հնարավորություն ընձեռել՝ ծանոթանալու

հաշվառման գործողությունների ընթացակարգին անմիջական առնչություն ունեցող իրավական ակտերին կամ փաստաթղթերին, իսկ հաշվառման գործողությունների կատարումը մերժելու դեպքում՝ նաև մերժելու մասին որոշումներ ընդունելու հիմքերին:

9. Եթե հաշվառման գործողություն կատարելու համար ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն, ապա հաշվառման ստորաբաժանման իրավասու պաշտոնատար անձը դրանք մատնացույց է անում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին)՝ հնարավորություն տալով համալրելու դրանք:

10. Հաշվառման գործողությունների կատարումը մերժվում է, եթե՝

1) տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված չէ (բացառությամբ հաշվառումից հանելու դեպքերի):

2) տրանսպորտային միջոցն առանց իրավասու մարմնի տված թույլտվության վերասարքավորված է:

3) փաստաթղթերի բնօրինակների փոխարեն ներկայացված են դրանց՝ նոտարի կամ դրանք տված մարմնի կողմից չհաստատված պատճենները:

4) ներկայացված չեն տրանսպորտային միջոցը կամ Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 2-ի N 817-Ն որոշման N 3 կամ N 5 հավելվածով նախատեսված փաստաթղթերը:

5) առկա է տրանսպորտային միջոցի իրական և փաստաթղթային տվյալների անհամապատասխանություն:

6) տրանսպորտային միջոցը կամ դրա համարակիր մասերից մեկը գտնվում է հետախուզման մեջ:

7) եթե արգելադրում է կիրառվել հաշվառման գործողությունների կատարման նկատմամբ:

8) մեկից ավելի սեփականատերերի առկայության դեպքում բացակայում է նրանց համաձայնությունը տրանսպորտային միջոցը նրանցից մեկի անվամբ հաշվառելու համար:

11. Հաշվառման գործողությունների կատարումը մերժելու դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) նրա ցանկությամբ նույն օրը տրվում է հաշվառման գործողության կատարումը մերժելու մասին գրավոր վարչական ակտ (որոշում), որի ձևը հաստատվում է Արցախի Հանրապետության ոստիկանության պետի կողմից, որում նշվում է մերժման իրավական հիմքը:

II. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

12. Տրանսպորտային միջոցի հաշվառումն իրականացվում է հաշվառման ստորաբաժանման «զննության կայան-վճարման վայր-սպասարկման սրահ-փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահ» հոսքագծի եղանակով՝ հետևյալ ընթացակարգով՝

1) զննության կայանում՝

ա. ստուգվում է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (եթե դա ներկայացնելը պարտադիր է),

բ. տրանսպորտային միջոցի իրական տվյալները համեմատվում են փաստաթղթային տվյալների հետ (բացառությամբ Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 2-ի N 817-Ն որոշման NN 3 և 5 հավելվածների 3-րդ կետերով սահմանված դեպքերի),

գ. տրանսպորտային միջոցի տվյալները մուտքագրվում են համակարգչային շտեմարան, ստուգվում է տրանսպորտային միջոցի նույնացման համարի, թափքի և հենասարքի (ամրաշրջանակի) տվյալների առկայությունը հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների և դրանց համարակիր մասերի շտեմարանում,

դ. տպագրվում է տրանսպորտային միջոցի տվյալների մասին արձանագրություն, որի վրա նշվում են վճարման ենթակա տուրքերի և վճարների տեսակներն ու չափերը:

2) վճարման վայրում սեփականատիրոջ կողմից վճարվում են տուրքերն ու վճարները և վճարման անդորրագրերը մյուս փաստաթղթերի հետ միասին ներկայացվում են սպասարկման սրահի աշխատողին.

3) սպասարկման սրահում՝

ա. ստուգվում է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ներկայացուցչի) և տրանսպորտային միջոցը ձեռք բերող անձի (ներկայացուցչի) ինքնությունը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի միջոցով,

բ. հատկացվում են հերթական կամ վճարովի հաշվառման համարանիշեր (բացառությամբ սույն կարգի 14-րդ կետով նախատեսված դեպքերի),

գ. հաշվառման տվյալները մուտքագրվում են տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարան և լրացվում է տրանսպորտային միջոցի հաշվառման էլեկտրոնային քարտ,

դ. հաշվառման համարանիշերը տրվում են սեփականատիրոջը (ներկայացուցչին), բացառությամբ սույն կարգի 19-րդ կետով նախատեսված դեպքերի,

ե. վերադարձվում են անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (եթե այն ներկայացվել է) ու վճարման անդորրագրերը («ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է» բառով դրոշմակնքելուց հետո),

զ. փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահին համակարգչով տրվում է հաշվառման վկայագրի տպագրման պատվեր.

4) փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահում ստուգվում է ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագրի առկայությունն ու դրա համապատասխանությունը Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 2-ի N 817-Ն որոշման N3 հավելվածով սահմանված պահանջներին, դրա տվյալները մուտքագրվում համակարգչային շտեմարան և

ա. տպագրվում է հաշվառման վկայագիրը,

բ. սեփականատերը (ներկայացուցիչը) ցանկացած ժամանակ կարող է ստանալ հաշվառման վկայագիրը:

III. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՐ

13. Տրանսպորտային միջոցի վերահաշվառումն իրականացվում է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված տվյալների (սեփականատիրոջ անձնագրային տվյալներից անվան, ազգանվան, ֆիզիկական անձանց հաշվառման (եթե տրանսպորտային միջոցը հաշվառված է ըստ նրա բնակության վայրի, ապա՝ նաև բնակության) վայրի կամ կազմակերպության գտնվելու վայրի, տրանսպորտային միջոցի թափքի կամ այլ համարակիր մասերի համարների), ինչպես նաև թափքի (խցիկի) գույնի կամ համարանիշերի փոփոխության կամ տրանսպորտային միջոցի վերասարքավորման դեպքում:

14. Ֆիզիկական անձանց հաշվառման վայրի կամ կազմակերպության գտնվելու վայրի փոփոխության հետ կապված տրանսպորտային միջոցի վերահաշվառման դեպքում հաշվառման համարանիշերը, տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ներկայացուցչի) ցանկությամբ, կարող են չհանձնվել և հաշվառման ժամանակ չփոխանակվել:

15. Տրանսպորտային միջոցի վերահաշվառումն իրականացվում է հաշվառման ստորաբաժանման «գննության կայան-վճարման վայր-սպասարկման սրահ-փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահ» հոսքագծի եղանակով՝ հետևյալ ընթացակարգով՝

1) գննության կայանում՝

ա. ստուգվում է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (եթե դա ներկայացնելը պարտադիր է),

բ. տրանսպորտային միջոցի իրական տվյալները համեմատվում են փաստաթղթային տվյալների հետ (բացառությամբ Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 2-ի N 817-Ն որոշման NN 3 և 5 հավելվածների 3-րդ կետերով սահմանված դեպքերի),

գ. տրանսպորտային միջոցի տվյալները մուտքագրվում են համակարգչային շտեմարան, ստուգվում է տրանսպորտային միջոցի նույնացման համարի, թափքի և հենասարքի (ամրաշրջանակի) տվյալների առկայությունը հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների և դրանց համարակիր մասերի շտեմարանում,

դ. տպագրվում է տրանսպորտային միջոցի տվյալների մասին արձանագրություն, որի վրա նշվում են վճարման ենթակա տուրքերի և վճարների տեսակներն ու չափերը.

2) վճարման վայրում սեփականատիրոջ կողմից վճարվում են տուրքերն ու վճարները և վճարման անդորրագրերը մյուս փաստաթղթերի հետ միասին ներկայացվում են սպասարկման սրահի աշխատողին.

3) սպասարկման սրահում՝

ա. ստուգվում է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ներկայացուցչի) ինքնությունը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի միջոցով,

բ. հատկացվում են հերթական կամ վճարովի հաշվառման համարանիշեր, եթե վերահաշվառման ժամանակ կատարվում է համարանիշերի փոփոխություն,

գ. վերահաշվառման տվյալները մուտքագրվում են տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարան և կատարվում են փոփոխություններ տրանսպորտային միջոցի հաշվառման էլեկտրոնային քարտում,

դ. տպագրվում և հատկացվում է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական (եթե այն փոփոխվել է),

ե. հաշվառման համարանիշերը տրվում են սեփականատիրոջը (ներկայացուցչին), եթե հատկացվել են հաշվառման համարանիշեր,

զ. վերադարձվում են անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (եթե այն վերահաշվառման արդյունքում չի փոփոխվել) ու վճարման անդորրագրերը («ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է» բառով դրոշմակնքելուց հետո),

է. փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահին համակարգչով տրվում է հաշվառման վկայագրի տպագրման պատվեր.

4) փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահում ստուգվում է ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագրի առկայությունն ու դրա համապատասխանությունը Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 2-ի N 817-Ն որոշման N3 հավելվածով սահմանված պահանջներին, դրա տվյալները մուտքագրվում համակարգչային շտեմարան և

ա. տպագրվում է հաշվառման վկայագիրը,

բ. սեփականատերը (ներկայացուցիչը) ցանկացած ժամանակ կարող է ստանալ հաշվառման վկայագիրը:

IV. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

16. Տրանսպորտային միջոցի հաշվառումից հանումն իրականացվում է՝

1) տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ փոփոխության դեպքում.

2) տրանսպորտային միջոցը Արցախի Հանրապետության տարածքից մշտապես արտահանելու դեպքում.

3) տրանսպորտային միջոցի խտանման դեպքում:

17. Տրանսպորտային միջոցի հաշվառումից հանումն իրականացվում է հաշվառման ստորաբաժանման «զննության կայան-վճարման վայր-սպասարկման սրահ» հոսքագծի եղանակով՝ հետևյալ ընթացակարգով՝

1) զննության կայանում՝

ա. ստուգվում են տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը չի կատարվել ճանապարհային ոստիկանությունում) կամ ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթը,

բ. տրանսպորտային միջոցի իրական տվյալները համեմատվում են փաստաթղթային տվյալների հետ (բացառությամբ Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 2-ի N 817-Ն որոշման NN 3 և 5 հավելվածների 3-րդ կետերով սահմանված դեպքերի),

գ. տրանսպորտային միջոցի տվյալները մուտքագրվում են համակարգչային շտեմարան, ստուգվում է տրանսպորտային միջոցի նույնացման համարի, թափքի և հենասարքի (ամրաշրջանակի) տվյալների առկայությունը հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների և դրանց համարակիր մասերի շտեմարանում,

դ. տպագրվում է տրանսպորտային միջոցի տվյալների մասին արձանագրություն, որի վրա նշվում են վճարման ենթակա տուրքերի և վճարների տեսակներն ու չափերը.

2) վճարման վայրում սեփականատիրոջ կողմից վճարվում են տուրքերն ու վճարները և վճարման անդորրագրերը մյուս փաստաթղթերի հետ միասին ներկայացվում են սպասարկման սրահի աշխատողին.

3) սպասարկման սրահում՝

ա. ստուգվում են տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ներկայացուցչի) ինքնությունը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի միջոցով և տրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու իրավասությունը,

բ. հատկացվում են «տարանցիկ» («ժամանակավոր») համարանիշեր՝ բացառությամբ սույն կարգի 14-րդ կետում և 16-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ սեփականատիրոջ փոփոխությամբ պայմանավորված՝ տրանսպորտային միջոցի հաշվառումից հանումն իրականացվում է հաշվառման հետ միաժամանակ,

գ. հաշվառումից հանելու տվյալները մուտքագրվում են տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարան և կատարվում են փոփոխություններ տրանսպորտային միջոցի հաշվառման էլեկտրոնային քարտում,

դ. տպագրվում և հատկացվում է հաշվառումից հանելու մասին տեղեկանքը,

ե. «տարանցիկ» («ժամանակավոր») համարանիշերը տրվում են հաշվառումից հանող անձին,

զ. վերադարձվում են անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթը և վճարման անդորրագրերը («ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է» բառով դրոշմակնքելուց հետո):

18. Հաշվառումից հանելիս՝ բացառությամբ սույն կարգի 14-րդ կետում նշված դեպքերի, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերը հանձնվում են հաշվառման ստորաբաժանում և դրանց փոխարեն տրվում են՝

1) տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ փոփոխության դեպքում, երբ տրանսպորտային միջոցը հաշվառվելու է այլ մարմինների կողմից՝ «ժամանակավոր» համարանիշեր՝ 15 օր ժամկետով.

2) տրանսպորտային միջոցը Արցախի Հանրապետության տարածքից մշտապես արտահանելու դեպքում՝ «տարանցիկ» համարանիշեր՝ 30 օր ժամկետով:

19. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու իրավունք ունեցող անձանց դեղին հիմնագույնի համարանիշ ունեցող տրանսպորտային միջոցներ օտարվելու դեպքում դեղին հիմնագույնի համարանիշերը, նախկին սեփականատիրոջ համաձայնությամբ, չեն

հանձնվում հաշվառման ստորաբաժանում, իսկ ի պահ հանձնված հիմնական համարանիշերը համարվում են հանձնված:

V. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

20. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (ներկայացուցիչը) տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու համար հաշվառման ստորաբաժանում է հանձնում հաշվառման վկայագիրն ու հաշվառման համարանիշերը: Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի սեփականատերը Արցախի Հանրապետությունում չէ, կամ նրա բնակության վայրը հայտնի չէ, տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու համար հաշվառման վկայագիրն ու հաշվառման համարանիշերը կարող է հանձնել ցանկացած շահագրգիռ անձ՝ հայտնելով սեփականատիրոջ կողմից դրանք չհանձնելու պատճառները:

21. Տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու համար հաշվառման վկայագիրն ու հաշվառման համարանիշերը չեն ներկայացվում, եթե՝

1) տրանսպորտային միջոցը հափշտակվելու հետ կապված գտնվում է հետախուզման մեջ.

2) դատարանի որոշմամբ տրանսպորտային միջոցի օգտագործումն արգելված է կամ իրավասու պետական մարմնի կողմից տրանսպորտային միջոցի օգտագործման նկատմամբ կիրառվել է արգելանք կամ տրանսպորտային միջոցը գտնվում է կալանքի տակ:

22. Տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու տվյալները մուտքագրվում են տրանսպորտային միջոցների հաշվառման շտեմարան և տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) տրվում հաշվառումից ժամանակավոր հանելու մասին տեղեկանք:

23. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (ներկայացուցիչը) հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցի հաշվառումը վերականգնելու համար հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու մասին տեղեկանքը:

24. Հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցի հաշվառումը վերականգնելու տվյալները մուտքագրվում են տրանսպորտային միջոցների հաշվառման շտեմարան և տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) վերադարձվում հաշվառման վկայագիրն ու հաշվառման համարանիշերը:

VI. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՑԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

25. Տրանսպորտային միջոցների հաշվառման միջազգային վկայագիր ստանալու համար անձը հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ.

2) հաշվառման վկայագիր.

3) «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթ:

26. Տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագիր տալու համար հաշվառման ստորաբաժանման իրավասու պաշտոնատար անձը տվյալները մուտքագրում է համակարգչային շտեմարան, լրացնում տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագիր և նույն օրը տալիս տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին):

**VII. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

27. Տրանսպորտային միջոցները մինչև 18 տարեկան կամ անգործունակ ճանաչված քաղաքացիների անվամբ հաշվառվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումների հիման վրա:

28. Արցախի Հանրապետությունում հավատարմագրված (ռեզիդենտ) դիվանագիտական առաքելություններին, միջազգային կազմակերպություններին, դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին պատկանող տրանսպորտային միջոցները հաշվառվում են այդ կազմակերպությունների անվանմամբ և հաշվառումից հանվում՝ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրված հայտի հիման վրա:

Հայտի ձևը սահմանում է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության ոստիկանության պետի հետ:

29. Դիվանագիտական գործակալներին պատկանող տրանսպորտային միջոցները հաշվառվում, վերահաշվառվում և հաշվառումից հանվում են Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրված հայտի հիման վրա, իսկ դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին անձնակազմի այլ անդամներին պատկանող տրանսպորտային միջոցները՝ փոխադարձության սկզբունքով՝ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտի հիման վրա:

Հայտի ձևը սահմանում է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության ոստիկանության պետի հետ:

30. Եթե տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ հաշվառման վկայագիրը տալ հաշվառման (վերահաշվառման) օրը, ապա տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) տրվում է հաշվառման ժամանակավոր վկայագիր՝ մինչև մեկ ամիս ժամկետով, որը նա ցանկացած ժամանակ իրավասու է փոխելու հիմնական հաշվառման վկայագրով: Հաշվառման ժամանակավոր վկայագրի ժամկետը երկարաձգվում է՝ հաշվառման վկայագիրը մեկամսյա ժամկետում պատրաստ չլինելու դեպքում:

31. Հափշտակված տրանսպորտային միջոցները, դրանց նկատմամբ հետախուզում հայտարարվելու դեպքում, սեփականատիրոջ (ներկայացուցչի) գրավոր դիմումի կամ հետախուզում հայտարարելու մասին փաստաթղթի (այդ թվում՝ էլեկտրոնային) հիման վրա հաշվառումից ժամանակավոր հանվում են, և դրանց գրանցումը կասեցվում է:

32. Սույն կարգի 31-րդ կետում նշված տրանսպորտային միջոցների հայտնաբերման դեպքում սեփականատիրոջ գրավոր դիմումի, տրանսպորտային միջոցը սեփականատիրոջը հանձնելու (հայտնաբերվելու) վերաբերյալ փաստաթղթի կամ հետախուզումը դադարեցնելու մասին փաստաթղթի (այդ թվում՝ էլեկտրոնային) հիման վրա հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցի հաշվառումը և գրանցումն անվճար վերականգնվում են:

33. Տրանսպորտային միջոցները խտտանելու դեպքում հաշվառումից հանելու համար սեփականատերը (ներկայացուցիչը) հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ.

2) տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր.

3) տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերը.

4) տրանսպորտային միջոցի (միջոցների) գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա. հարկադիր էլեկտրոնային աճուրդով ձեռքբերման,

բ. սնանկության աճուրդով ձեռքբերման,

գ. հարկադիր էլեկտրոնային աճուրդից կամ սնանկության վարույթի աճուրդից գույքը պահանջատիրոջը կամ պարտատիրոջը հանձնման,

դ. բանկերի (վարկային կազմակերպությունների, գրավատների) կողմից արտադատական եղանակով բռնագանձման,

ե. դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին, ինչպես նաև դրանց դիվանագիտական կամ վարչատեխնիկական անձնակազմի՝ Արցախի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անդամներին պատկանող տրանսպորտային միջոցների իրացման,

զ. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության և բորսաների կողմից օտարման:

34. Ավտոմոբիլի գույք համարանիշերի, մոտոցիկլի, կցորդի համարանիշերի կորստյան դեպքում տրանսպորտային միջոցը խոտանելու համար ներկայացվում է նաև Արցախի Հանրապետության ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից տրված՝ դրանց կորստյան փաստի վերաբերյալ հայտարարություն տալը հավաստող փաստաթուղթ:

35. Ավտոմոբիլի մեկ համարանիշի կամ հաշվառման վկայագրի կորստյան դեպքում դրա մասին նշում է կատարվում տրանսպորտային միջոցը խոտանելու մասին էլեկտրոնային գործում: Այդ դեպքում մեկ համարանիշի կամ հաշվառման վկայագրի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ խոտանումը մերժելու համար:

VIII. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՏՍԱԹԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՈՉԼՉԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

36. Տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման համակարգչային շտեմարանները և էլեկտրոնային մատյանները պահպանվում են մշտական, իսկ տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը, ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթը (ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխանության վերաբերյալ անկախ ավտոփորձագետի կողմից տրված եզրակացությունը), հաշվառման վկայագիրը, տրանսպորտային միջոցն արտադրող գործարանի ներկայացուցչության կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական գնություն անցկացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանքը, տրանսպորտային միջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը, տրանսպորտային միջոցների տվյալների մասին տեղեկանքը, տրանսպորտային միջոցի վերասարքավորման կամ առանց համապատասխան թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոցի վերահաշվառման թույլտվություն տալու մասին որոշումները (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ստացված)՝ մեկ տարի ժամկետով, որից հետո ենթակա են ոչնչացման:

37. Սույն կարգի 36-րդ կետում նշված պահպանման ժամկետը հաշվարկվում է փաստաթղթերը հաշվառման ստորաբաժանում մուտք լինելու օրվանից:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ց Ա Ն Կ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ
ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (լիազորված անձը, ներկայացուցիչը) հաշվառման գործողություններ կատարելու համար հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում տրանսպորտային միջոցը՝ բացառությամբ սույն ցանկի 3-րդ կետով նախատեսված դեպքերի, և՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, իսկ բնակչության պետական ռեգիստրում հաշվառում չունենալու դեպքում՝ նաև փաստացի բնակչության վայրի նշումով տեղեկանք.

2) ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթ, եթե տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքը գրանցված չէ Արցախի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունում (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն).

3) օրենքով սահմանված տուրքերի և վճարների վճարման փաստը հավաստող փաստաթղթեր (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի):

2. Բացի սույն ցանկի 1-ին կետում նշված փաստաթղթերից՝ ներկայացվում են նաև՝

1) տրանսպորտային միջոցի հաշվառման դեպքում՝ սեփականատիրոջ կամ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալ հանդիսացող անձի անվամբ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր, ընդ որում, վերջին դեպքում ներկայացվում են վարձակալի կարգավիճակը հավաստող փաստաթղթեր (պայմանագիրը ենթակա չէ ներկայացվելու այն տրանսպորտային միջոցների համար, որոնց օգտագործումից բխող պատասխանատվությունը, օրենքի համաձայն, ենթակա չէ պարտադիր ապահովագրման).

2) տրանսպորտային միջոցի վերահաշվառման դեպքում՝

ա. տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր,

բ. վերահաշվառման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ (բացառությամբ տրանսպորտային միջոցի գույնը կամ համարանիշերը փոխելու դեպքերի),

գ. սեփականատիրոջ կամ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալ հանդիսացող անձի անվամբ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր, ընդ որում, վերջին դեպքում ներկայացվում են վարձակալի կարգավիճակը հավաստող փաստաթղթեր (պայմանագիրը ենթակա չէ ներկայացման այն տրանսպորտային միջոցների համար, որոնց օգտագործումից բխող պատասխանատվությունը, օրենքի համաձայն, ենթակա չէ պարտադիր ապահովագրման),

դ. տրանսպորտային միջոցի (միջոցների) գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանք, եթե վերահաշվառումը կապված է հաշվառման հասցեի փոփոխության հետ և նոր հասցեն գտնվում է այլ համայնքի տարածքում.

3) տրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու դեպքում՝

ա. տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր,

բ. հաշվառման համարանիշեր:

3. Տրանսպորտային միջոցը հաշվառման ստորաբաժանում չի ներկայացվում՝

1) եթե առկա է տրանսպորտային միջոցը հաշվառման ստորաբաժանում ներկայացնելու խոչընդոտ (տրանսպորտային միջոցի փոխարեն ներկայացվում է ճանապարհային ոստիկանության վարչական մասի կամ տրանսպորտային միջոցի

գտնվելու վայրն սպասարկող հաշվառման ստորաբաժանման կողմից տրված՝ տրանսպորտային միջոցի տվյալների մասին տեղեկանք)։

2) տրանսպորտային միջոցը խտտանելու հետ կապված՝ հաշվառումից հանելու դեպքում։

3) տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ անունը, ազգանունը կամ հաշվառման (ժամանակավոր հաշվառման կամ փաստացի բնակության) վայրը փոփոխվելու հետ կապված հաշվառման գործողություններ կատարելու, ինչպես նաև կորած հաշվառման վկայագրի կամ կորած հաշվառման համարանիշի փոխարեն նորը ստանալու, հաշվառման համարանիշը կամ հաշվառման վկայագիրը փոխարինելու դեպքերում։

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ց Ա Ն Կ

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ**

1. Տրանսպորտային միջոցը գրանցելու դեպքում ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, իսկ բնակչության պետական ռեգիստրում հաշվառում չունենալու դեպքում՝ նաև փաստացի բնակչության վայրի նշումով տեղեկանք.

2) ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ ինքնաշեն տրանսպորտային միջոցների, որոնց դեպքում ներկայացվում է ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխանության վերաբերյալ անկախ ավտոփորձագետի կողմից տրված եզրակացություն (ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանվում են Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի և Արցախի Հանրապետության ոստիկանության պետի համատեղ հրամանով).

3) սեփականատիրոջ տվյալների փոփոխության փաստը հավաստող փաստաթուղթ՝ անունը, ազգանունը կամ հայրանունը (կազմակերպության դեպքում՝ անվանումը) փոխված լինելու դեպքում.

4) տարանցիկ կամ այլ հաշվառման համարանիշեր (եթե առկա են).

5) տրանսպորտային միջոցն արտադրող գործարանի ներկայացուցչության կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական գնություն անցկացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանք, եթե առանց տեխնիկական միջոցների կամ սարքավորումների հնարավոր չէ տեսնել կամ պարզել տրանսպորտային միջոցի համարակիր մասերի համարները.

6) տրանսպորտային միջոցի (միջոցների) գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա. հարկադիր էլեկտրոնային աճուրդով ձեռքբերման,

բ. սնանկության աճուրդով ձեռքբերման,

գ. հարկադիր էլեկտրոնային աճուրդից կամ սնանկության վարույթի աճուրդից գույքը պահանջատիրոջը կամ պարտատիրոջը հանձնման,

դ. բանկերի (վարկային կազմակերպությունների, գրավատների) կողմից արտադատական եղանակով բռնագանձման,

ե. դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին, ինչպես նաև դրանց դիվանագիտական կամ վարչատեխնիկական անձնակազմի՝ Արցախի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անդամներին պատկանող տրանսպորտային միջոցների իրացման,

զ. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության և բորսաների կողմից օտարման:

Սույն կետով նախատեսված դեպքերում ներկայացվում են դրանք հիմնավորող համապատասխան փաստաթղթերը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ց Ա Ն Կ
ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (լիազորված անձը, ներկայացուցիչը) միաժամանակ տրանսպորտային միջոցը գրանցելու և հաշվառելու դեպքում հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում տրանսպորտային միջոցը՝ բացառությամբ սույն ցանկի 3-րդ կետով նախատեսված դեպքերի, և՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, իսկ բնակչության պետական ռեգիստրում հաշվառում չունենալու դեպքում՝ նաև փաստացի բնակչության վայրի նշումով տեղեկանք.

2) ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ ինքնաշեն տրանսպորտային միջոցների, որոնց դեպքում ներկայացվում է ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխանության վերաբերյալ անկախ ավտոփորձագետի կողմից տրված եզրակացություն (ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանվում են Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի և Արցախի Հանրապետության ոստիկանության պետի համատեղ հրամանով).

3) սեփականատիրոջ տվյալների փոփոխության փաստը հավաստող փաստաթուղթ՝ անունը, ազգանունը կամ հայրանունը (կազմակերպության դեպքում՝ անվանումը) փոխված լինելու դեպքում.

4) տարանցիկ կամ այլ հաշվառման համարանիշեր (եթե առկա են).

5) տրանսպորտային միջոցն արտադրող գործարանի ներկայացուցչության կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական գնություն անցկացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանք, եթե առանց տեխնիկական միջոցների կամ սարքավորումների հնարավոր չէ տեսնել կամ պարզել տրանսպորտային միջոցի համարակիր մասերի համարները.

6) օրենքով սահմանված տուրքերի և վճարների վճարման փաստը հավաստող փաստաթղթեր (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի).

7) սեփականատիրոջ կամ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալ հանդիսացող անձի անվամբ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր, ընդ որում, վերջին դեպքում ներկայացվում են վարձակալի կարգավիճակը հավաստող փաստաթղթեր (պայմանագիրը ենթակա չէ ներկայացվելու այն տրանսպորտային միջոցների համար, որոնց օգտագործումից բխող պատասխանատվությունը, օրենքի համաձայն, ենթակա չէ պարտադիր ապահովագրման).

8) տրանսպորտային միջոցի (միջոցների) գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա. հարկադիր էլեկտրոնային աճուրդով ձեռքբերման,

բ. սնանկության աճուրդով ձեռքբերման,

գ. հարկադիր էլեկտրոնային աճուրդից կամ սնանկության վարույթի աճուրդից գույքը պահանջատիրոջը կամ պարտատիրոջը հանձնման,

դ. բանկերի (վարկային կազմակերպությունների, գրավատների) կողմից արտադատական եղանակով բռնագանձման,

ե. դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին, ինչպես նաև դրանց դիվանագիտական կամ վարչատեխնիկական անձնակազմի՝

Արցախի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անդամներին պատկանող տրանսպորտային միջոցների իրացման,

զ. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության և բորսաների կողմից օտարման:

Սույն կետով նախատեսված դեպքերում ներկայացվում են դրանք հիմնավորող համապատասխան փաստաթղթերը:

2. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (լիազորված անձը, ներկայացուցիչը) միաժամանակ տրանսպորտային միջոցը գրանցումից և հաշվառումից հանելու դեպքում հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում տրանսպորտային միջոցը՝ բացառությամբ սույն ցանկի 3-րդ կետով նախատեսված դեպքերի, և՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ՝ ֆիզիկական անձանց համար հաշվառման (ժամանակավոր հաշվառման կամ փաստացի բնակության) վայրի նշումով տեղեկանքի հետ միասին, եթե անձը հաստատող փաստաթղթում բացակայում են հաշվառման կամ փաստացի բնակության վայրի մասին տեղեկությունները.

2) տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական (եթե գործարքը կատարվել է ճանապարհային ոստիկանությունում) կամ ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթ.

3) սեփականատիրոջ տվյալների փոփոխության փաստը հավաստող փաստաթուղթ՝ անունը, ազգանունը կամ հայրանունը (կազմակերպության դեպքում՝ անվանումը) փոխված լինելու դեպքում.

4) հաշվառման վկայագիր.

5) հաշվառման համարանիշեր.

6) տրանսպորտային միջոցն արտադրող գործարանի ներկայացուցչության կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննությունն անցկացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանք, եթե առանց տեխնիկական միջոցների կամ սարքավորումների հնարավոր չէ տեսնել կամ պարզել տրանսպորտային միջոցի համարակիր մասերի համարները.

7) օրենքով սահմանված տուրքերի և վճարների վճարման փաստը հավաստող փաստաթղթեր (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի):

3. Տրանսպորտային միջոցը հաշվառման ստորաբաժանում չի ներկայացվում՝

1) եթե առկա է տրանսպորտային միջոցը հաշվառման ստորաբաժանում ներկայացնելու խոչընդոտ (տրանսպորտային միջոցի փոխարեն ներկայացվում է ճանապարհային ոստիկանության վարչական մասի կամ տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը սպասարկող հաշվառման ստորաբաժանման կողմից տրված՝ տրանսպորտային միջոցի տվյալների մասին տեղեկանք).

2) տրանսպորտային միջոցը խոտանելու հետ կապված՝ հաշվառումից հանելու դեպքում:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ձ Ե Վ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՎԿԱՅԱԿԱՆ N 00 AA 000000

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

(սեփականատիրոջ (համասեփականատերերի) ազգանունը, անունը, հայրանունը)

(անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրված)

(կազմակերպության դեպքում՝ լրիվ անվանումը և պետական ռեգիստրի վկայականի համարը)

(հաշվառման (բնակության, կազմակերպության դեպքում՝ գտնվելու) վայրը)

Մակնիշը (տիպարը) _____ թողարկման տարեթիվը _____
տեսակը _____ նույնացման համարը (VIN) _____
թափքի համարը _____ հենասարքի (ամրաշրջանակի) համարը _____
շարժիչի հզորությունը _____
Սեփականության իրավունքը ծագել է « ____ » _____ 20__ թ., _____
_____ -ի հիման վրա:

Այլ նշումներ _____

Արցախի Հանրապետության ոստիկանության
«Ճանապարհային ոստիկանություն» ծառայության

(ստորաբաժանման անվանումը)

հաշվառման-քննական ստորաբաժանման ղեկավար _____ (ստորագրություն) _____ (անունը, ազգանունը)

« ____ » _____ 20__ թ.
Կ.Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ձ Ե Վ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳՐԻ

Դիմերես

AM ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ
 VEHICLE REGISTRATION CERTIFICATE
 СВИДЕТЕЛЬСТВО ОБ УЧЕТЕ ТС

ՍՊԻՐԱԿԱՆՑՈՐԸ
 1. ԻՄԱՆ
 OWNER

ԻՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԸ
 2. ADDRESS

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ
 3. ԻՍՏԻՎԱՆՈՒԹՅՈՒՆ
 ISSUED AT POLICE RA

ՎՃԱՐՄԱՆ ԵՐԱՆՈՒՄ
 4. ԳԻՏԱԿԱՆ
 DATE

Դարձերես

1. ԻՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԸ REGISTRATION NUMBER	1. ԻՄԱՆ IM	03
2. ԻՄԱՆ NAME	2. ԱՄՈՒՄԻ ԲԱՆՈՒՄ OWNER NUMBER	03
3. ԻՄԱՆ TYPE	3. ԻՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԸ CHASSIS NUMBER	04
4. ԻՄԱՆ VEHICLE CATEGORY	4. ԻՄԱՆ BODY NUMBER	05
5. ԻՄԱՆ BODY TYPE	5. ԻՄԱՆ ENGINE POWER (KW)	06
6. ԻՄԱՆ COLOR	6. ԻՄԱՆ PERMISSIBLE MAXIMUM HEIGHT (MM)	05
7. ԻՄԱՆ YEAR OF ISSUE	7. ԻՄԱՆ NET WEIGHT (KG)	06
	8. ԻՄԱՆ OBSERVATIONS	09

ՕՏԱՐՄԱՆ ԲՈՒՐ Ը
 IS NOT A BASELINE FOR ALIENATION

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ

1. Տրանսպորտային միջոցի պետական հաշվառման վկայագիրը 86x54 միլիմետր չափերով պլաստիկ քարտ է:

2. Ձևաթղթի ամբողջ մակերևույթը պատված է պաշտպանիչ բազմագույն միախուսվող մանրանախշով, որում գերիշխում է երկնագույնը:

3. Առանձին տարրեր պատկերված են հետևյալ կերպ՝

1) դիմերեսը (վերևից ներքև, ձախից աջ)՝

ա. քարտի վերևի եզրից 2,5 միլիմետր հեռավորության վրա քարտի ամբողջ երկարությամբ անցնում են կապույտ գույնի և 2,8 միլիմետր հաստությամբ 3 (երեք) հորիզոնական շերտազծեր, որոնց միջև եղած հեռավորությունը 0,3 միլիմետր է,

բ. ձախ եզրից հինգ միլիմետրի վրա, որտեղ 15 միլիմետր երկարությամբ հորիզոնական շերտազծերը միաձուլվում են, զետեղված է Հայաստանի Հանրապետության միջազգային նույնականացումը՝ «AM» 13x3,5 միլիմետր չափերով և սպիտակ գույնով,

գ. վերևի շերտազծի կենտրոնով՝ աջ եզրից 1,4 միլիմետրի վրա, սպիտակ գույնով, վեց կետաչափ տպատառով տպված է «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ» անվանումը հայերենով,

դ. երկրորդ շերտազծի կենտրոնով՝ աջ եզրից 1,4 միլիմետրի վրա, վեց կետաչափ տպատառով, սպիտակ գույնով տպված է «VEHICLE REGISTRATION CERTIFICATE» անվանումն անգլերենով,

ե. երրորդ շերտազծի կենտրոնով՝ աջ եզրից 1,4 միլիմետրի վրա, վեց կետաչափ տպատառով, սպիտակ գույնով տպված է «СВИДЕТЕЛЬСТВО ОБ УЧЕТЕ ТС» անվանումը ռուսերենով,

զ. քարտի աջ կողմից՝ կապույտ հորիզոնական շերտազծից ներքև, աջ եզրից 8,6 միլիմետր հեռավորության վրա, վերևից ներքև անցնում են երեք ուղղահիվ շերտեր՝ 32x3,1 միլիմետր չափերի, որոնք խորհրդանշում են Հայաստանի Հանրապետության ազգային դրոշմը: Շերտերի գույները ձախից աջ հետևյալն են՝ կարմիր, կապույտ, նարնջագույն,

է. ուղղագիծ շերտազծերի վրա՝ կենտրոնում, աջ եզրից 13 միլիմետր հեռավորության վրա գտնվող կենտրոնով պատկերված են 2,5 միլիմետր, 4,2 միլիմետր, 7 միլիմետր, 8 միլիմետր, 9 միլիմետր և 10 միլիմետր տրամաչափերով օղակներ: Կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության միջազգային «AM» նույնականացումը, իսկ 4,2 միլիմետր տրամագծով օղակի ներսում՝ պաշտպանիչ մանրատառ շերտ՝ հետևյալ կրկնվող բովանդակությամբ՝

«ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ VEHICLE REGISTRATION CERTIFICATE СВИДЕТЕЛЬСТВО ОБ УЧЕТЕ ТС»,

ը. ավելի ներքևում՝ 15 x 3 միլիմետր չափի և մոխրագույն ֆոնի վրա, զետեղված է սպիտակ գույնով և ութ կետաչափ տպատառով «ARMENIA» գրառումը,

թ. քարտի վերևի եզրից 12,5 միլիմետր և ձախ եզրից 2,6 միլիմետրի վրա զետեղված են իրարից 0,6 միլիմետր հեռավորության վրա գտնվող երկու անձնավորման դաշտեր՝ 81 x 3,1 միլիմետր չափերի,

ժ. վերևի դաշտի կենտրոնում՝ քարտի ձախ եզրից 6,1 միլիմետր հեռավորության վրա, տպված է «ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ» բառը, իսկ երկրորդ դաշտի կենտրոնում՝ «OWNER» բառը: Այդ երկու դաշտերի կենտրոնում՝ դաշտի ձախ եզրից 0,4 միլիմետր հեռավորության վրա, տպված է դաշտի ընթացիկ համարը,

ժա. 0,4 միլիմետր ներքև և ձախ եզրից երկու միլիմետր դեպի աջ զետեղված են իրարից 0,8 միլիմետր հեռավորության վրա գտնվող 60 x 3,1 միլիմետր չափերի վեց անձնավորեցման դաշտեր,

ժբ. վերևի դաշտի կենտրոնում՝ քարտի ձախ եզրից 6,1 միլիմետր հեռավորության վրա, տպված են «ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԸ» բառերը, իսկ չորրորդ դաշտի կենտրոնում՝

«ADDRESS» բառը: Երրորդ և չորրորդ դաշտերի կենտրոնում՝ դաշտի ձախ եզրից 0,4 միլիմետր հեռավորության վրա, տպված է դաշտի ընթացիկ համարը,

ժգ. երկու միլիմետր ներքև և քարտի ձախ եզրից 2,6 միլիմետր դեպի աջ, ձախից աջ գետեղված են իրարից 1,9 միլիմետր հեռավորության վրա գտնվող 31,8 x 5 միլիմետր և 26,1 x 5 միլիմետր չափերի երկու անձնավորման դաշտեր,

ժդ. ձախ դաշտի կենտրոնով՝ դաշտի ձախ եզրից 0,4 միլիմետր հեռավորության վրա, տպված է դաշտի հերթական համարը, այնուհետև դաշտի ձախ եզրից 3,5 միլիմետրի վրա իրար տակ տպված են «ՏՐՎԱԾ Է ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» և «ISSUED AT POLICE RA» բառերը,

ժե. աջ դաշտի կենտրոնով՝ դաշտի ձախ եզրից 0,4 միլիմետր հեռավորության վրա տպված է դաշտի հերթական համարը, այնուհետև դաշտի ձախ եզրից 3,3 միլիմետրի վրա իրար տակ տպված են «ԱՄՍԱԹԻՎԸ» և «DATE» բառերը,

ժզ. ավելի աջ գետեղված է տրանսպորտային միջոցի հաշվառման վկայականի համարի 18,1 x 3 միլիմետր չափերի դաշտը,

ժէ. անձնավորման դաշտերն առաջանում են հիմնական խորքային նկարից երկնագույն գույնի հեռացմամբ, իսկ դաշտերի նշումները տպված են կապույտ (PANTONE Blue 072 U) գույնով և 3,8 կետաչափ տպատառով,

ժը. քարտի ներքևում, մինչև ներքևի եզրը 2,8 միլիմետր հեռավորության վրա, քարտի ամբողջ երկարությամբ, 0,2 միլիմետր բարձրության հոծ գծի տեսքով անցնում է կապույտ գույնի պաշտպանիչ մանրատառ շերտ՝ հետևյալ կրկնվող բովանդակությամբ՝ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ VEHICLE REGISTRATION CERTIFICATE СВИДЕТЕЛЬСТВО ОБ УЧЕТЕ ТС»,

ժթ. քարտի ներքևում՝ մինչև ներքևի եզրը 1,9 միլիմետր հեռավորության վրա, քարտի ամբողջ երկարությամբ անցնում է կապույտ գույնի և 0,6 միլիմետր հաստության լայնակի գիծ.

2) դարձերեսը (վերևից ներքև, ձախից աջ)՝

ա. քարտի վերևի եզրից 2,6 միլիմետր ներքև՝ քարտի ամբողջ երկայնքով, 0,2 միլիմետր բարձրությամբ հոծ գծի տեսքով անցնում է կապույտ գույնի պաշտպանիչ մանրատառ շերտ՝ հետևյալ կրկնվող բովանդակությամբ՝

«ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ VEHICLE REGISTRATION CERTIFICATE СВИДЕТЕЛЬСТВО ОБ УЧЕТЕ ТС»,

բ. քարտի վերևի եզրից 3,3 միլիմետրի և ձախ եզրից երեք միլիմետրի վրա տեղակայված է 81 x 41 միլիմետր չափի ուղղանկյուն, որն առաջանում է հիմնական խորքային նկարից երկնագույն գույնի հեռացմամբ,

գ. անձնավորման դաշտերով աղյուսակը գետեղված է ուղղանկյան ներսում: Աղյուսակի կետերն իրարից բաժանված են կապույտ (PANTONE Blue 072 U) գույնի ուղղահայաց և հորիզոնական 0,27 միլիմետր հաստության գծերով,

դ. աղյուսակի հինգ ուղղահայաց գծերն ունեն 41 միլիմետր երկարություն և տեղակայված են ձախ եզրից համապատասխանաբար 2,8 միլիմետր, 5,4 միլիմետր, 43,4 միլիմետր, 81,3 միլիմետր և 83,9 միլիմետր հեռավորությամբ,

ե. առաջին և չորրորդ սյունակների բջիջների կենտրոնում, 1,8 միլիմետր տրամագծով շրջաններում գետեղված են բջիջների համարները՝ չորս կետաչափ Helvetica Bold տպատառով,

զ. երկրորդ և երրորդ սյունակների բջիջներում՝ ուղղահայաց գծից 0,8 միլիմետր դեպի աջ, իրար տակ հայերենով և անգլերենով տպված են անձնավորման դաշտերի անվանումները,

է. քարտի ներքևից 8,6 միլիմետր բարձրության վրա 81 միլիմետր երկարությամբ անցնում է կապույտ (PANTONE Blue 072 U) գույնի և 0,4 միլիմետր հաստության լայնակի գիծ, որում սպիտակ տառերով անցնում է պաշտպանիչ մանրատառ շերտ՝ հետևյալ կրկնվող բովանդակությամբ՝

«ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ VEHICLE REGISTRATION CERTIFICATE СВИДЕТЕЛЬСТВО ОБ УЧЕТЕ ТС»,

ը. քարտի ներքևի եզրից 2,8 միլիմետր բարձր անձնավորվում է 5x 54,4 միլիմետր չափերով դաշտում նրբագծային ծածկագիր (ծածկագրի երկարությունը՝ 14 նիշ),

թ. քարտի ներքևի եզրից 2,8 միլիմետր բարձրության վրա տպագրվում են «Օտարման հիմք չէ» և «IS NOT A BASELINE FOR ALIENATION» բառերը,

ժ. քարտի ներքևի եզրից երկու միլիմետր բարձր, և աջ եզրից 15 միլիմետր հեռավորության վրա խորքային պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանի ուրվագիծը:

4. Անձնավորեցումից հետո քարտի դիմերեսի ամբողջ մակերեսը պատվում է հատուկ պաշտպանիչ թաղանթով, որը տարբեր անկյուններով դիտելիս ամբողջ մակերեսով պատկերում է Հայաստանի Հանրապետության քարտեզի տարբեր չափերի ուրվագծեր, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը և բազմիցս կրկնվող «A» տառը:

5. «ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ»-«OWNER», «ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԸ»-«ADDRESS», «ՏՄ ՏԵՍԱԿԱՆԱՏԵՐԸ»-«VEHICLE CATEGORY», «ԹՄՓՔԻ ՏԵՍԱԿԱՆԱՏԵՐԸ»-«BODY TYPE», «ԳՈՒՅՆԸ»-«COLOUR» և «ՀԱՏՈՒԿ ԵՆՈՒՄՆԵՐԸ»-«SPECIAL OBSERVATIONS» անձնավորման դաշտերի տվյալներն անցկացվում են համապատասխանաբար հայերենով և անգլերենով (յոթ կետաչափ տպատառ): Մնացած բոլոր դաշտերը լրացվում են միայն լատինատառ:

6. Դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

1) դիմերեսը (յոթ կետաչափ տպատառ)՝

ա. «ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ»-«OWNER»՝ սեփականատիրոջ ազգանունը, անունը և հայրանունը կամ կազմակերպության (հիմնարկության) անվանումը, իսկ իրավաբանական անձանց, Արցախի Հանրապետությանը կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող, սակայն դրանց կողմից ստեղծված իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների (հիմնարկ, պետական մարմին, իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություններ) կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների դեպքում, եթե դրանք հաշվառվում են դրանք շահագործող կազմակերպությունների անվանմամբ, շահագործող կազմակերպության անվանումը, ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալությամբ տրվող տրանսպորտային միջոցների դեպքում՝ վարձակալի ազգանունը, անունը և հայրանունը կամ վարձակալ կազմակերպության (հիմնարկության) անվանումը (յուրաքանչյուր լեզվով առավելագույնը՝ 40 նիշ),

բ. «ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԸ»-«ADDRESS»՝ մարզ, համայնք, բնակավայր, փողոց, տուն, բնակարան (յուրաքանչյուր լեզվով առավելագույնը՝ 100 նիշ),

գ. «ԱՄՄԱԹԻՎԸ»-«DATE»՝ հաշվառման ամսաթիվը (10 նիշ),

դ. հաշվառման վկայագրի համարը՝ ներքևի աջ անկյունում (երկու տառ, վեց թիվ).

2) դարձերեսը (6,5 կետաչափ տպատառ)՝

ա. «ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԸ»-«REGISTRATION NUMBER» (առավելագույնը 10 նիշ), ութ կետաչափ տպատառ,

բ. «ՄԱԿՆԻՇԸ»-«MARK» և «ՏԻՊԱՐԸ»-«TYPE»՝ առավելագույնը 30-ական նիշ,

գ. «ՏՄ ՏԵՍԱԿԱՆԱՏԵՐԸ»-«VEHICLE CATEGORY»՝ յուրաքանչյուր լեզվով առավելագույնը՝ 20 նիշ,

դ. «ԹՄՓՔԻ ՏԵՍԱԿԱՆԱՏԵՐԸ»-«BODY TYPE»՝ յուրաքանչյուր լեզվով առավելագույնը՝ 20 նիշ,

ե. «ԳՈՒՅՆԸ»-«COLOUR»՝ յուրաքանչյուր լեզվով առավելագույնը՝ 30 նիշ,

զ. «ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ»-«YEAR OF ISSUE»՝ չորս նիշ,

է. «ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ»-«VIN»՝ առավելագույնը 25 նիշ,

ը. «ՇԱՐԺԻՉԻ ՀԱՄԱՐԸ»-«ENGINE NUMBER»՝ առավելագույնը 25 նիշ,

թ. «ՇԵՆԱՍԱՐՔԻ ՀԱՄԱՐԸ»-«CHASSIS NUMBER»՝ առավելագույնը 25 նիշ,

ժ. «ԹՄՓՔԻ ՀԱՄԱՐԸ»-«BODY NUMBER»՝ առավելագույնը 25 նիշ,

ժա. «ՇԱՐԺԻՉԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ԿՎՏ/Չ.ՈՒ.)»-«ENGINE POWER (KW/HP)»՝ ինը նիշ,

ժբ. «ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՆՔՎԱԾԸ (ԿԳ)»-«PERMISSIBLE MAXIMUM WEIGHT (Kg)»՝ վեց նիշ,

ժգ. «ԶԱՆԳՎԱԾԸ՝ ԱՌԱՆՅ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ (ԿԳ)»-«NET WIGHT (Kg)»՝ վեց նիշ,

ժդ. «ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄՆԵՐ»-«SPECIAL OBSERVATIONS»՝ յուրաքանչյուր լեզվով առավելագույնը 36 նիշ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ձ Ե Վ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ

<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ LA REPUBLIQUE DE ARMENIE</p> <p>REPUBLIC OF ARMENIA РЕСПУБЛИКА АРМЕНИЯ</p> <p>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵՎՈՒԹՅՈՒՆ LA CIRCULATION INTERNATIONALE ROUTIERE INTERNATIONAL ROAD TRAFFIC МЕЖДУНАРОДНОЕ ДОРОЖНОЕ ДВИЖЕНИЕ</p> <p>ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ CERTIFICAT D'IMMATRICULATION REGISTRATION CERTIFICATE OF VEHICLE МЕЖДУНАРОДНОЕ СВИДЕТЕЛЬСТВО УЧЕТА ТРАНСПОРТНОГО СРЕДСТВА</p> <p style="text-align: center;">AA N</p>	<p>A Registration number _____ Учетный номер</p> <p>B Production year _____ Год выпуска</p> <p>C Owner or Holder _____ Владелец</p> <p>Address _____ Место жительства</p> <p>D Mark, type _____ Марка, модель ТС</p> <p>Engine N _____ Двигатель</p> <p>Chassi N _____ Шасси</p> <p>Body N _____ Кузов</p> <p>Colour _____ Цвет</p>
---	---

<p>E VIN _____ Идентификационный номер</p> <p>F Valid by _____ Действительно до</p> <p>G Permissible max. weight (kg) _____ Разр. максим. масса (кг)</p> <p>H Net weight (kg) _____ Масса без нагрузки (кг)</p>	<p>ԱՐՊՍՅՆ ՆՇՍՈՒ ԱՂ</p> <p>Is not a baseline for alienation</p> <p>Не является основой для отчуждения</p>
<p>Special notes _____ Особые отметки</p> <p>Issued at _____ Выдано</p> <p>Issue date _____ Дата выдачи</p> <p>Firma _____ Подпись</p> <p>P.P.</p> <p>M.П.</p>	

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ

1. Տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագիրը (այսուհետ՝ միջազգային վկայագիր) 86,7 x 120 միլիմետր չափսերի՝ չորս էջից բաղկացած երկնագույն գրքույկ է:

2. Միջազգային վկայագրի առաջին էջի վրա վերևից ներքև հերթականությամբ (հայերեն, ֆրանսերեն, անգլերեն և ռուսերեն) տպագրվում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», «LA REPUBLIQUE DE ARMENIE», «REPUBLIC OF ARMENIA», «РЕСПУБЛИКА АРМЕНИЯ» բառերը, Հայաստանի Հանրապետության «AM» տարբերիչ նշանը, «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ», «LA CIRCULATION INTERNATIONALE ROUTIERE», «INTERNATIONAL ROAD TRAFFIC» և «МЕЖДУНАРОДНОЕ ДОРОЖНОЕ ДВИЖЕНИЕ» բառերը, «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ», «CERTIFICAT D'IMMATRICULATION», «REGISTRATION CERTIFICATE OF VEHICLE» և «СВИДЕТЕЛЬСТВО УЧЕТА ТРАНСПОРТНОГО СРЕДСТВА» բառերը և միջազգային վկայագրի սերիան ու համարը՝ «MEN»:

3. Միջազգային վկայագրի 2-րդ, 3-րդ և 4-րդ էջերը լրացվում են անգլերեն և ռուսերեն:

4. Միջազգային վկայագրի 2-րդ էջում հերթականությամբ լրացվում են՝

1) «A Registration number»-«Учетный номер» տողում՝ տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերը (օրինակ՝ 61 LU 500)։

2) «B Production year»-«Год выпуска» տողում՝ տրանսպորտային միջոցի արտադրության տարեթիվը։

3) «C Owner or Holder»-«Владелец» տողում՝ միջազգային վկայագիրը ստացողի ազգանունը, անունը (օրինակ՝ «CHILINGARYAN ARMAN», «ЧИЛИНГАРЯН АРМАН») կարող է լրացվել նաև հայրանունը կամ ամուսնու անունը։

4) «Address»-«Место жительства» տողում՝ միջազգային վկայագիրը ստացողի բնակության վայրը (հասցեն) (օրինակ՝ «Mamikonian st. #10/5, YEREVAN, RA», «РА, г. Ереван, ул. Мамиконяна, дом 10, кв. 5»)։

5) «D Mark, type»-«Марка, модель ТС» տողում՝ տրանսպորտային միջոցի մակնիշը և մոդելը (օրինակ՝ VAZ-2110)։

6) «Engine»-«Двигатель» տողում՝ տրանսպորտային միջոցի շարժիչի համարը։

7) «Chassi»-«Шасси» տողում՝ տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի համարը։

8) «Body»-«Кузов» տողում՝ տրանսպորտային միջոցի թափքի համարը։

9) «Colour»-«Цвет» տողում՝ տրանսպորտային միջոցի գույնը։

5. Միջազգային վկայագրի 3-րդ էջում հերթականությամբ լրացվում են՝

1) «E VIN»-«Идентификационный номер» տողում՝ տրանսպորտային միջոցի նույնացման համարը։

2) «G Permissible max weight (kg)» - «Разр. максим. масса (кг)» տողում՝ տրանսպորտային միջոցի թույլատրելի առավելագույն զանգվածը։

3) «H Net weight (kg)»-«Масса без нагрузки (кг)» տողում՝ տրանսպորտային միջոցի զանգվածը՝ առանց բեռնվածության։

4) «Special notes»-«Особые отметки» տողում՝ տրանսպորտային միջոցին վերաբերող հատուկ նշումները կամ, կցորդի առկայության դեպքում, վերջինիս մակնիշը և հաշվառման համարանիշը։

5) «Issued at»-«Выдано» տողում՝ «POLICE RA»։

6) «Issue date»-«Дата выдачи» տողում՝ միջազգային վկայագիրը տալու ամսաթիվը (օրինակ՝ 24.02.2002)։

7) «F Valid by»-«Действительно до» տողում՝ միջազգային վկայագրի գործողության ժամկետը։

8) «Firma»-«Подпись» տողում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության՝ միջազգային վկայագիրը հատկացնող ստորաբաժանման ղեկավարի ազգանունը, ստորագրությունը և կնիքի տեղը։

6. Միջազգային վկայագրի 4-րդ էջում հերթականությամբ տպագրվում են «Օտարման հիմք չէ», «Is not a baseline for alienation» և «Не является основой для отчуждения» բառերը, իսկ ազատ մասը նախատեսված է այլ նշումների համար։

ԱՐՑՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ձ Ե Վ

**«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՄԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՍ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ) ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ ՄԱՔՄԱՅԻՆ
ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՄՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ**

**«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՄԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՍ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ) ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ ՄԱՔՄԱՅԻՆ
ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՄՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ**

Ներմուծողը _____
(անունը, ազգանունը, հաշվառման (ժամանակավոր հաշվառման կամ փաստացի բնակության) վայրը)

_____ (կազմակերպության դեպքում՝ լրիվ անվանումը, կազմակերպության դեպքում՝ գտնվելու վայրը)

Հաշվառման համարանիշը _____ մականիշը, տիպարը _____
տեսակը _____ թափքի տեսակը _____ թափքի համարը _____
հենասարքի (ամրաշրջանակի) համարը _____ թողարկման տարեթիվը _____
գույնը _____ նույնացման համարը (VIN) _____
Հատուկ նշումներ _____

Ուժի մեջ է մինչև « ____ » _____ 20__ թ. Օտարման հիմք չէ

Ճանապարհային ոստիկանության

_____ (ստորաբաժանման անվանումը)
_____ ստորաբաժանման ղեկավար _____ Կ.Տ. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

« ____ » _____ 20__ թ.

Երկարացված է մինչև « ____ » _____ 20__ թ.

Ճանապարհային ոստիկանության

_____ (ստորաբաժանման անվանումը)
_____ ստորաբաժանման ղեկավար _____ Կ.Տ. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

« ____ » _____ 20__ թ.

Հաշվառումից հանված է « ____ » _____ 20__ թ.՝ _____ համարանիշերով:

Ճանապարհային ոստիկանության

_____ (ստորաբաժանման անվանումը)

_____ ստորաբաժանման ղեկավար _____ Կ.Տ. _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

« ____ » _____ 20__ թ.

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ր Գ

**«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՄԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՍ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ
(ԿԱՍ) «ՄԱՔՄԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՈՒՄ» ՄԱՔՄԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՍ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ) ՈՒՂԵՎՈՐԱՑԻՆ ՄԱՔՄԱՅԻՆ
ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող և (կամ) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (Ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման, այդ տրանսպորտային միջոցներին հաշվառման փաստաթղթեր և համարանիշեր տալու, դրանց գործողության ժամկետը երկարացնելու և հաշվառումից հանելու հետ կապված հարաբերությունները:

2. «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (Ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառումն իրականացվում է մաքսային հայտարարագրի և ներմուծողի անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, իսկ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող և (կամ) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառումն իրականացվում է այդ տրանսպորտային միջոցն ուղեկցող փաստաթղթի (տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթ) հիման վրա: Արցախի Հանրապետության տարածք վարելու միջոցով ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցների համար ներկայացվում է նաև ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր:

**II. «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՄԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ
ԿԱՍ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ) ՈՒՂԵՎՈՐԱՑԻՆ
ՄԱՔՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ԱՍԻՍ
ԺԱՄԿԵՏՈՎ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ**

3. «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (Ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ մինչև երկու ամիս ժամկետով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառումն իրականացվում է մաքսային մարմինների կողմից մաքսային ձևակերպման ժամանակ:

4. Եթե ներմուծվող տրանսպորտային միջոցի համարանիշը պարունակում է ոչ լատիներեն տառեր կամ արաբական թվեր կամ չունի համարանիշ, ապա հայտարարագրված տրանսպորտային միջոցին մաքսային մարմինների կողմից հատկացվում են

տարանցիկ համարանիշեր, որոնք մաքսային մարմնին են տրամադրվում Արցախի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) կողմից:

**III. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ
ՈՒՆԵՑՈՂ ԵՎ (ԿԱՍ) «ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ
ԿԱՍ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ
ԿԱՍ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ) ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ
ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԵՐԿՈՒ ԱՄՄԻՑ ԱՎԵԼԻ
ԺԱՄԿԵՏՈՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ**

5. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող և (կամ) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառումն իրականացվում է տրանսպորտային միջոցը ներմուծող անձի սահմանահատումը ձևակերպելու հետ միաժամանակ՝ տրանսպորտային միջոցը ներմուծող անձի խնդրարկած, սակայն այդ անձի՝ Արցախի Հանրապետությունում գտնվելու օրենքով սահմանված ժամկետը չգերազանցող ժամկետով:

6. «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ երկու ամսից ավելի ժամկետով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառումն իրականացվում է ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական ստորաբաժանման կողմից:

7. «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ երկու ամսից ավելի ժամկետով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցի հաշվառման համար ներմուծողը ներկայացնում է՝

1) ներմուծողի անվամբ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր (պայմանագիրը ենթակա չէ ներկայացվելու այն տրանսպորտային միջոցների համար, որոնց օգտագործումից բխող պատասխանատվությունը, օրենքի համաձայն, ենթակա չէ պարտադիր ապահովագրման)։

2) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ՝ ֆիզիկական անձանց համար հաշվառման (ժամանակավոր հաշվառման կամ փաստացի բնակության) վայրի նշումով տեղեկանքի հետ միասին, եթե անձը հաստատող փաստաթղթում բացակայում է հաշվառման կամ փաստացի բնակության վայրի մասին տեղեկությունը։

3) մաքսային հայտարարագիր («Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների համար) կամ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթ (Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող և (կամ) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների համար)։

4) օրենքով սահմանված տուրքերի և վճարների վճարման փաստը հավաստող փաստաթղթեր:

8. Ճանապարհային ոստիկանության իրավասու պաշտոնատար անձը ներմուծողի և տրանսպորտային միջոցի փաստացի տվյալները համեմատում է մաքսային հայտարարագրում կամ տրանսպորտային միջոցի անձնագրում նշված տվյալների հետ, ստուգում սույն կարգի 7-րդ կետում նշված մյուս փաստաթղթերի առկայությունը, տրանսպորտային միջոցի համարանիշերը (եթե առկա են) վերցնում է ի պահ,

այնուհետև տվյալները մուտքագրում է համակարգիչ, հատկացնում (դուրս գրում) «տարանցիկ» համարանիշեր, այնուհետև վերջինիս կողմից իր անվամբ կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիրը ներկայացնելուց հետո ստուգում դրա համապատասխանությունը սույն կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, որից հետո տպագրում «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (Ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր (այսուհետ՝ հաշվառման վկայագիր), որը ստորագրելուց և կնքելուց հետո «տարանցիկ» համարանիշերի հետ միասին՝ ստորագրությամբ հանձնում տրանսպորտային միջոցը ներմուծող անձին, ինչպես նաև վերադարձնում է անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթը, մաքսային հայտարարագիրը կամ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթը և վճարման անդորրագրերը («ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է» բառով դրոշմակնքումից հետո):

9. Ներմուծողի և տրանսպորտային միջոցի փաստացի տվյալների և մաքսային հայտարարագրում կամ տրանսպորտային միջոցի անձնագրում նշված տվյալների անհամապատասխանության դեպքում հաշվառման գործողության կատարումը մերժվում է մինչև անհամապատասխանության վերացումը:

10. «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (Ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման ժամկետը կարող է երկարացվել «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Արցախի Հանրապետություն ներմուծման ժամկետի՝ մաքսային մարմնի կողմից երկարացման փաստաթղթերի հիման վրա:

11. «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման ժամկետը երկարացնելու համար ճանապարհային ոստիկանության իրավասու պաշտոնատար անձը փոփոխված տվյալները մուտքագրում է համակարգիչ, հաշվառման վկայագրում կատարում ժամկետի երկարացման մասին գրառում (նշում է հաշվառման վկայագրի գործողության ժամկետը), որը ստորաբաժանման ղեկավարի կողմից ստորագրվելուց և կնքվելուց հետո «տարանցիկ» համարանիշի հետ միասին՝ ստորագրությամբ հանձնում տրանսպորտային միջոցը ներմուծող անձին:

**IV. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ
(ԿԱՍ) «ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՍ
«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՍ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ) ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ
ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԵՐԿՈՒ ԱՍՄԻՑ ԱՎԵԼԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ**

12. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող և (կամ) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցները հաշվառումից հանվում են տրանսպորտային միջոցն արտահանող անձի սահմանահատումը ձևակերպելու հետ միաժամանակ՝ նույն մարմնի կողմից:

13. «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (Ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ երկու ամսից ավելի ժամկետով Արցախի Հանրապետություն ներմուծված

տրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու համար ներմուծողը ճանապարհային ոստիկանության հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ.

2) օրենքով սահմանված տուրքերի և վճարների վճարման փաստը հավաստող փաստաթղթեր:

14. «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ երկու ամսից ավելի ժամկետով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցները հաշվառումից հանելու դեպքում ճանապարհային ոստիկանության իրավասու պաշտոնատար անձը վերցնում է հաշվառման վկայագիրն ու «տարանցիկ» համարանիշերը, հաշվառումից հանելու մասին տվյալները մուտքագրում համակարգիչ և վերադարձնում տրանսպորտային միջոցի արտահանման երկրի կողմից տրված համարանիշերը (եթե վերցվել էին ի պահ):

15. «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ երկու ամսից ավելի ժամկետով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների «տարանցիկ» համարանիշերի կորստյան դեպքում սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված կարգով տրվում են նոր «տարանցիկ» համարանիշեր:

16. «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ երկու ամսից ավելի ժամկետով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցի արտահանման երկրի կողմից տրված համարանիշերի կորստյան, ինչպես նաև առանց համարանիշի ներմուծման դեպքում, տրանսպորտային միջոցը հաշվառելիս հատկացված «տարանցիկ» համարանիշերը տրանսպորտային միջոցը հաշվառումից հանելիս հետ չեն վերցվում:

17. Հաշվառման փաստաթղթեր և հաշվառման համարանիշեր չեն տրվում «ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող և (կամ) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Արցախի Հանրապետություն ներմուծված՝

1) Արցախի Հանրապետության պետական մարմինների ու պաշտոնատար անձանց պաշտոնական հրավերներով Արցախի Հանրապետության տարածք մուտք գործող պատվիրակությունների և անձանց տրանսպորտային միջոցներին.

2) օտարերկրյա պետություններում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների անձնակազմերի տրանսպորտային միջոցներին.

3) Արցախի Հանրապետության տարածք մարդասիրական օգնության, բարեգործական ծրագրերի շրջանակներում, որպես փոխադրամիջոց, ինչպես նաև այդ առաքելությունների իրականացման համար մուտք գործող տրանսպորտային միջոցներին:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին շահագործման համար նախատեսված և Արցախի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) ստորաբաժանման կողմից հաշվառվող տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման համարանիշերի (այսուհետ՝ համարանիշեր) հաշվառման և հատկացման հետ կապված հարաբերությունները:

II. ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

2. Համարանիշեր պատրաստող կազմակերպությունից համարանիշերը, ստանալուց հետո, ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական ստորաբաժանումում մուտքագրվում են համարանիշերի մուտքի և ելքի մատյանում, որի ձևը հաստատվում է Արցախի Հանրապետության ոստիկանության պետի կողմից ու պահեստավորվում, իսկ ծախսն արտացոլվում է տրանսպորտային միջոցների էլեկտրոնային ռեգիստրում: «Ժամանակավոր» տեսակի համարանիշերն առաքվում են ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության շարային ստորաբաժանումներ:

3. Սույն կարգի 20-րդ կետում նշված դեպքերում ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության շարային ստորաբաժանումներից համարանիշերի ստացումը և դրանք տրանսպորտային միջոցները տնօրինողներին հանձնելն արձանագրվում են համարանիշերի մուտքի և ելքի առանձին մատյանում, որի ձևը հաստատվում է Արցախի Հանրապետության ոստիկանության պետի կողմից:

4. Ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ստորաբաժանումներում «Ժամանակավոր» տեսակի համարանիշերի ստացումը և անձնակազմին բաշխումն արձանագրվում են համարանիշերի մուտքի և ելքի մատյանում: «Ժամանակավոր» տեսակի համարանիշերի հատկացումն արձանագրվում է «Ժամանակավոր» տեսակի համարանիշերի հատկացման մատյանում:

5. Տրանսպորտային միջոցների առևտրային գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին «Փորձարկում» և «Ժամանակավոր» տեսակի համարանիշերը հատկացվում են ըստ իրենց կողմից ներկայացված հայտի՝ ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական ստորաբաժանման կողմից՝ պայմանագրի հիման վրա, որով, բացի օրենսդրությամբ պայմանագրին ներկայացվող սահմանված պահանջներից, սահմանվում են նաև այդ համարանիշերը հաշվառելու և հատկացնելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու կարգն ու պայմանները:

6. Հաշվառման քննական ստորաբաժանում վերադարձված համարանիշերը, բացառությամբ սույն կարգի 9-րդ կետում նշված դեպքերի, յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին ենթակա են առնվազն երկու մասի կտրման եղանակով ոչնչացման՝ ստորաբաժանման աշխատողներից կազմված հանձնաժողովի կողմից:

7. Համարանիշերի ոչնչացման փաստն արձանագրվում է համարանիշերի ոչնչացման մատյանում, որի ձևը հաստատվում է Արցախի Հանրապետության ոստիկանության պետի կողմից:

8. Վերադարձման ենթակա չէ Արցախի Հանրապետության Նախագահին սպասարկող տրանսպորտային միջոցի համարանիշը:

9. Ոչնչացման ենթակա չեն (բացառությամբ շահագործման ընթացքում մաշված, անընթեռնելի դարձած համարանիշերի)՝

1) «Փորձարկում» տեսակի համարանիշերը.

2) Արցախի Հանրապետությունում հավատարմագրված (ռեզիդենտ) դիվանագիտական առաքելությունների, միջազգային կազմակերպությունների՝ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց անձնակազմերի անդամների տրանսպորտային միջոցներին հատկացվող համարանիշերը.

3) «Հյուրերին սպասարկող» տեսակի համարանիշերը.

4) դեղին հիմնագույնի համարանիշերը:

10. Ոչնչացված համարանիշերը կրկին կարող են արտադրվել միայն համարանիշերի ոչնչացման մատյանում գույգ համարանիշերի, բացառությամբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ոչնչացման վերաբերյալ գրառման առկայության դեպքում:

III. ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

11. Ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական ստորաբաժանումում հաշվառվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին շահագործման համար նախատեսված տրանսպորտային միջոցներին հատկացվում են համարանիշեր (այսուհետ՝ հիմնական համարանիշեր):

12. Հիմնական համարանիշերն ըստ հատկացման հերթականության բաժանվում են երեք խմբի՝

1) հերթական համարանիշեր՝ հատկացվում են տրանսպորտային միջոցի հաշվառման պահին ստորաբաժանումում առկա համարանիշերից ըստ աճող հերթականության.

2) ցանկալի համարանիշեր՝ տրվող հերթականության խախտմամբ համարանիշեր, բացառությամբ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ հաշվառման (ժամանակավոր հաշվառման կամ փաստացի բնակության) վայրի կամ կազմակերպության գտնվելու վայրի փոփոխության կապակցությամբ համարանիշերը չփոխանակելու դեպքերի՝ հատկացվում են ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային հաշվին լրացուցիչ հաստատագրված գումարի վճարման դեպքում.

3) մեծ պահանջարկ ունեցող համարանիշեր՝ սահմանված չափորոշիչներին համապատասխանող համարանիշեր՝ հատկացվում են ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային հաշվին տվյալ չափորոշիչին համապատասխանող համարանիշերի համար սահմանված լրացուցիչ հաստատագրված գումարի վճարման դեպքում:

13. Թեթև մարդատար և բեռնատար ավտոմոբիլներին ու ավտոբուսներին հատկացվում են թվերի ու տառերի միևնույն հավաքածուն պարունակող 2 (դիմացի և հետին), իսկ մոտոտրանսպորտային միջոցներին, տրիցիկլերին, քվադրոցիկլերին, կցորդներին ու կիսակցորդներին՝ մեկ համարանիշ:

14. Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու Արցախյան Թեմի, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների, հանրապետական գործադիր մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների և հիմնարկի կարգավիճակ ունեցող՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների), պետական ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ նրանց կողմից ստեղծված կազմակերպությունների՝ անկախ կազմակերպարկավական ձևից), Արցախի Հանրապետության դատախազության, Արցախի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, օրենքով ստեղծված պետական մարմինների, Արցախի Հանրապետության դատարանների, Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի նիշերը սահմանում է Արցախի Հանրապետության ոստիկանության պետը:

15. Պետական պահպանության ենթակա պաշտոնատար անձանց սպասարկող տրանսպորտային միջոցներին հատկացվում են այդ պաշտոնատար անձանց ամրաց-

ված հաշվառման համարանիշերը, անկախ նրանց սպասարկող տրանսպորտային միջոցների գրանցման մարմնից:

16. Դեղին հիմնագույնի համարանիշերը տրանսպորտային միջոցին հատկացվում են դրա հիմնական համարանիշերն ի պահ վերցնելուց հետո: Դեղին հիմնագույնի համարանիշերով տրանսպորտային միջոցները Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխանաբար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու իրավունք ունեցող անձանց օտարվելու կամ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալության տրամադրվելու դեպքում տրանսպորտային միջոցի հետ միասին, նախկին սեփականատիրոջ համաձայնությամբ, նոր սեփականատիրոջը կամ վարձակալին են անցնում նաև դրանց համար տրված դեղին հիմնագույնի համարանիշերը, ինչի մասին ճանապարհային ոստիկանության տվյալ ստորաբաժանման կողմից կատարվում է համապատասխան գրառում:

17. «Տարանցիկ» տեսակի համարանիշերը հատկացվում են ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական ստորաբաժանման կողմից Արցախի Հանրապետության տարածքից դուրս հանվելու համար հաշվառումից հանվող տրանսպորտային միջոցներին՝ իրենց նոր հաշվառման վայր մեկնելու համար, ինչպես նաև «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով երկու ամսից ավելի ժամկետով Արցախի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցներին:

18. «Տարանցիկ» տեսակի համարանիշերի վրա ժամկետը նշվում է դրանք հատկացնող՝ սույն կարգի 16-րդ կետում նշված ստորաբաժանման կողմից համարանիշի դիմային մասի դեղին հիմնագույնի դաշտում՝ այդ դաշտի վերևի մասում տարեթիվը, ներքևի մասում՝ ամիսը արաբական թվերով նշված ինքնակաշուն թաղանթ փակցնելու միջոցով:

19. «Հյուրերին սպասարկող» տեսակի համարանիշերը հատկացվում են ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական ստորաբաժանման կողմից՝ համապատասխան պետական կառավարման մարմնի կողմից տրված հայտի հիման վրա՝ հիմնական համարանիշերը հայտում նշված ժամկետով ի պահ վերցնելուց հետո:

20. «Ժամանակավոր» տեսակի համարանիշեր հատկացվում են՝

1) ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության ստորաբաժանումների կողմից՝ «Ճանապարհային երթուղիների անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում տրանսպորտային միջոցի երթուղությունն արգելելու նպատակով ի պահ վերցված հիմնական համարանիշերի փոխարեն՝ երթուղիության արգելման պատճառը վերացնելու համար անհրաժեշտ ժամկետով:

2) ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական ստորաբաժանման կողմից՝ հետագայում ընդհանուր օգտագործման ճանապարհներին չչափազործվելու կամ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ավտոծառայությունում հաշվառվելու նպատակով հաշվառումից հանվող տրանսպորտային միջոցներին՝ 15 օր ժամկետով (այդ դեպքում «Ժամանակավոր» տեսակի համարանիշերը ենթակա են ոչնչացման այդ տրանսպորտային միջոցը տնօրինողի կողմից):

3) տրանսպորտային միջոցների առևտրային գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից՝ առևտրային նպատակներով ձեռք բերված (ներմուծված) և օտարված տրանսպորտային միջոցներին՝ 15 օր ժամկետով (այդ դեպքում «Ժամանակավոր» տեսակի համարանիշերը ենթակա են ոչնչացման ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական ստորաբաժանման կողմից):

21. «Ժամանակավոր» տեսակի համարանիշերի վրա ժամկետը նշվում է դրանք հատկացնող՝ սույն կարգի 19-րդ կետում նշված ստորաբաժանումների կամ սուբյեկտների համապատասխան աշխատողների կողմից համարանիշի դիմային մասի դեղին հիմնագույնի դաշտում՝ այդ դաշտի վերևի մասում ժամկետի ավարտի օրը, ներքևի մասում ամիսը՝ արաբական թվերով նշված ինքնակաշուն թաղանթ փակցնելու միջոցով:

22. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ավտոձառա-
յությունում տրանսպորտային միջոցների հաշվառման և համարանիշերի հատկացման
կարգը սահմանվում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարի
հրամանով:

23. «Փորձարկում» տեսակի համարանիշեր հատկացվում են՝

1) ճանապարհային ոստիկանության հաշվառման քննական ստորաբաժանման
կողմից՝ տրանսպորտային միջոց արտադրող կազմակերպության արտադրական
նմուշ հանդիսացող կամ ֆիզիկական անձանց ինքնաշեն՝ ճանապարհային
փորձարկումներին մասնակցող տրանսպորտային միջոցներին՝ 1 ամիս ժամկետով:

2) տրանսպորտային միջոցների առևտրային գործունեություն իրականացնող
տնտեսավարող սուբյեկտների կողմից՝ առևտրային նպատակներով ձեռք բերված
(ներմուծված) տրանսպորտային միջոցներին՝ մեկ օր ժամկետով:

24. Կորած զույգ համարանիշերի (իսկ եթե սույն կարգի 13-րդ կետի համաձայն
հատկացվել է մեկ համարանիշ, ապա նաև դրա) փոխարեն հատկացվում են թվերի ու
տառերի այլ հավաքածու պարունակող համարանիշեր:

25. Ձույգ համարանիշերից մեկի կորստյան դեպքում դրա կրկնօրինակը տրվում է
միայն մեկ անգամ: Այդ դեպքում մինչև կրկնօրինակի հատկացումը հատկացվում է
«Ժամանակավոր» տեսակի համարանիշ՝ յոթ օր ժամկետով:

26. Տրանսպորտային միջոցների համարանիշեր տալու (այդ թվում՝ համարանիշե-
րը փոխարինելու, կորած համարանիշերի փոխարեն նորը կամ կրկնօրինակը տալու,
ինչպես նաև շահագործման ընթացքում մաշված, անընթեռնելի դարձած համարանիշե-
րի փոխարեն տառերի ու թվերի նույն հավաքածուն պարունակող նոր համարանիշեր
տալու) համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Լեռնային
Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով, իսկ մեծ
պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշերի հատկացման դեպքում՝ նաև
տվյալ համարանիշի համար սահմանված չափով վճար:

IV. ՑԱՆԿԱԼԻ ԵՎ ՄԵԾ ՊԱՀԱՆՋԱՐԿ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

27. Ցանկալի և մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի ընտրությունը կարող է
կատարվել ինչպես հաշվառման քննական ստորաբաժանման սպասարկման սրահի
աշխատողի կողմից՝ տրանսպորտային միջոցի հաշվառման ժամանակ, այնպես էլ՝
տրանսպորտային միջոցը հաշվառման ներկայացրած անձի կողմից՝ հաշվառման քն-
նական ստորաբաժանման սպասարկման սրահում տեղադրված տեխնիկական
միջոցով:

28. Ցանկալի և մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի ընտրության համակար-
գը պետք է բացառի ցանկալի կամ մեծ պահանջարկ ունեցող որևէ ազատ համարանիշ
(բացառությամբ սույն կարգի 14-րդ կետով նախատեսված համարանիշերի) ցույց
չտալու, ինչպես նաև առանց ամրագրելու տվյալ համարանիշը համակարգից հանելու
կամ որպես ոչ ազատ (ամրագրված կամ զբաղված) համարանիշ ցույց տալու հնարա-
վորությունը:

29. Ցանկալի և մեծ պահանջարկ ունեցող համարանիշն ամրագրվում է միայն
հաշվառման ներկայացված տրանսպորտային միջոցին՝ երեք ժամով, բայց ոչ ավելի,
քան մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը: Նշված ժամկետում համարանիշի
հատկացման համար սահմանված գնի վճարումը հավաստող փաստաթուղթը տրանս-
պորտային միջոցը հաշվառման տարածքային ստորաբաժանում չներկայացվելու
դեպքում ամրագրված համարանիշն ավտոմատ կերպով վերադարձվում է համակարգ՝
որպես ազատ համարանիշ, իսկ հաշվառման ներկայացված տրանսպորտային
միջոցին հատկացվում է հերթական համարանիշ:

30. Եթե հաշվառման ներկայացված տրանսպորտային միջոցին ամրագրված
ցանկալի համարանիշը մինչև ամրագրումն արդեն իսկ որպես հերթական համարանիշ
առաքվել է այլ հաշվառման ստորաբաժանում, ապա այդ տրանսպորտային միջոցին

հատկացնելու դեպքում այն տրամադրվում է յոթ օրվա ընթացքում, իսկ մինչ այդ, ինչպես նաև այն դեպքերում, երբ ցանկալի կամ մեծ պահանջարկ ունեցող համարանիշը հաշվառման պահին չի գտնվում տվյալ ստորաբաժանումում, տրանսպորտային միջոցին հատկացվում են «Ժամանակավոր» տեսակի համարանիշեր՝ յոթ օր ժամկետով:

31. Մինչև սույն կարգի 24-րդ կամ 29-րդ կետերով սահմանված ժամկետի ավարտը, եթե հատկացված կրկնօրինակը կամ ցանկալի կամ մեծ պահանջարկ ունեցող համարանիշը դեռևս չի առաքվել այն հատկացնող ստորաբաժանում, տրանսպորտային միջոցի սեփականատերը կարող է իր տրանսպորտային միջոցին հատկացված կրկնօրինակը կամ ցանկալի կամ մեծ պահանջարկ ունեցող համարանիշը ստանալ այն ստորաբաժանումից, որտեղ գտնվում է հատկացված համարանիշը՝ ստանալու մասին գրառում կատարելով հաշիվ-ապրանքագրի դարձերեսին և ստորագրելով այն: Այդ դեպքում «Ժամանակավոր» տեսակի համարանիշը համապատասխան աշխատողի կողմից ոչնչացվում է ամբողջականությունը խախտելու եղանակով, որի մասին գրառում է կատարում համարանիշերի ոչնչացման մատյանում:

32. Մեծ պահանջարկ ունեցող ազատ համարանիշերի մասին տեղեկատվությունը ենթակա է հրապարակման և թարմացման՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտի դրությամբ՝ Արցախի Հանրապետության ոստիկանության պաշտոնական կայքում:

33. Մեծ պահանջարկ ունեցող՝ կորած համարանիշերի հայտնաբերման դեպքում դրանք կրկին տրվում են այն կրող տրանսպորտային միջոցին, եթե տրանսպորտային միջոցը մինչև այդ հաշվառումից չի հանվել: Եթե կորած համարանիշերի փոխարեն տրվել են նոր համարանիշեր, ապա, տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ ցանկությամբ, դրանք կարող են փոխարինվել հայտնաբերված համարանիշերով՝ հայտնաբերման մասին սեփականատիրոջը տեղեկացնելու օրվանից երեք ամսվա ընթացքում: Նշված ժամկետը լրանալուց հետո կամ սեփականատիրոջ կողմից համարանիշերը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում հայտնաբերված համարանիշերը սահմանված կարգով կարող են հատկացվել այլ անձի (ներառվում են ազատ համարանիշերի ցանկում):

34. Մեծ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործողը կարող է այդ համարանիշն օգտագործելու իրավունքը փոխանցել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում նշված մերձավոր ազգականին՝ համարանիշերի հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի, իսկ եթե այդ համարանիշերը հատկացվել են նախքան աճուրդային կարգով մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի՝ առանց աճուրդի հատկացումը՝ տվյալ համարանիշի համար սահմանված գնի վճարմամբ:

35. Մեծ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործողը կարող է այդ համարանիշը ցանկացած ժամանակ վերահաշվառել սեփականության իրավունքով իրեն կամ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում նշված մերձավոր ազգականին պատկանող այլ տրանսպորտային միջոցի վրա՝ համարանիշերի հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի, իսկ եթե այդ համարանիշերը հատկացվել են նախքան աճուրդային կարգով մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի՝ առանց աճուրդի հատկացումը՝ նաև տվյալ համարանիշի համար սահմանված գնի վճարմամբ:

36. Մեծ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործելու իրավունքը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում նշված մերձավոր ազգականին փոխանցելու դեպքում համարանիշն օգտագործողի (ներկայացուցչի) ներկայությունը և համաձայնությունը պարտադիր են:

37. Մեծ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործելու իրավունքը կարող է փոխանցվել տրանսպորտային միջոցը ժառանգած անձին՝ համարանիշերի հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի, իսկ եթե այդ համարանիշերը


հատկացվել են նախքան աճուրդային կարգով մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի՝ առանց աճուրդի հատկացումը՝ նաև տվյալ համարանիշի համար սահմանված գնի վճարմամբ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇՆԵՐԻ ՆԻՇԵՐ

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ, ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՕՐԵՆՔՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՎ ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Հ/Հ	Պաշտոնատար անձը, պետական կառավարչական հիմնարկը	Ծառայողական ավտոմոբիլների համարանիշերի նիշերը
1.	Արցախի Հանրապետության Նախագահ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմ	001 LL  002LL90 001SS90 004LL90 003SS90 006LL90 004SS90 007LL90 002OO90 009LL90 002UU90 010LL90 004UU90 020LL90
2.	Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ	001 LL90 003LL90 003OO90 008SS90 061CC90-070CC90
3.	Արցախի Հանրապետության պետական նախարար	001CC90
4.	Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմ	044CC90, 055CC90 361CC90-370CC90
5.	«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում	002CC90, 003CC90, 033CC90 041CC90-043CC90 045CC90-054CC90 056CC90-060CC90 999CC90 094UU90, 165UU22 363LL90
6.	Արցախի Հանրապետության կառավարության անդամներ, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարներ, օրենքով ստեղծված պետական մարմինների	001OS90 033LL90 049LL90 099LL90 004CC90-040CC90

	դեկավարներ, Արցախի Հանրապետության շրջվարչակազմերի դեկավարներ և Ստեփանակերտի քաղաքապետ	
--	---	--

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2018թ.

N 834-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 44-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**:

1. Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի «Արցախի Հանրապետության պետական նախարարի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N44-Ն որոշման N1 հավելվածի 18-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին ենթակետով.

«11.1) սահմանում և շնորհում է պետական նախարարի պարզևներ.»:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2018թ.

N 844-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց «Արև» համակարգի ուսուցման և համակարգչային տեխնիկայի տրամադրման կարգը հաստատելու մասին» N 318-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետում, որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ, 15-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի «Ժամանակավոր օթևանի տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին» N 139-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 9-րդ կետում «սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի (այսուհետ՝ տարածքային մարմին)» բառերը փոխարինել «՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալության (այսուհետ՝ գործակալություն)» բառերով.

2) 10-րդ, 12-13-րդ, 15-րդ, 21-րդ կետերում «տարածքային մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «գործակալություն» բառով և դրա հոլովածներով.

3) 14-րդ կետում «, տարածքային մարմին ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարություն» բառերը փոխարինել «և գործակալություն» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 19-ի «Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման կարգը, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետները հաստատելու և Լեռնային

Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի N 287 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 198-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ, 4-րդ, 8-րդ, 24-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով, իսկ «սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները (այսուհետ՝ տարածքային մարմին)» բառերը՝ «նախարարության աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունները (այսուհետ՝ գործակալություն)» բառերով.

3) 18.1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով՝ նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության և հասարակայնության հետ կապերի բաժնի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի հրամանով՝ նախարարության աշխատակազմի ընտանիքների կարիքավորության գնահատման և սոցիալական աջակցության վարչության» բառերով.

4) 21-րդ, 26-րդ, 28-29-րդ կետերում «տարածքային մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «գործակալություն» բառով և դրա հոլովածներով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ոչ կառավարչական հիմնարկ ստեղծելու և հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» N 329-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, 1-2-րդ կետերում, որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրում, 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) նախարարության կազմում գործող ոչ կառավարչական հիմնարկ է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մատուցում է ծառայություններ սոցիալական սպասարկման բնագավառում՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:».

բ. 2-6-րդ, 11-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով,

գ. 8-րդ կետի 2-րդ պարբերությունում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային պետական մարմինները» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության շրջաններում՝ նախարարության աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունները» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2018թ.

N 845-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ղ ջ յ մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի «Ստեփանակերտի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 248 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 5-րդ կետում «ԼՂՀ սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 1.1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն)» բառերով,

բ. 1.3-1.4-րդ, 1.8-րդ կետերում, 3.1-ին կետի «ա» ենթակետում, 3.3-րդ կետի «զ», «թ» ենթակետերում, 3.5-րդ, 3.10-րդ կետերում, 3.12-րդ կետի «բ», «ե» ենթակետերում, 4.2-րդ, 8.1-ին, 8.3-րդ, 8.5-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովածներով,

գ. 2.5-րդ կետում, 3.3-րդ կետի «Ժա» ենթակետում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով,

դ. 3.1-ին կետի «բ» ենթակետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի «Ստեփանակերտի պրոթեզաօրթոպեդիկ կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N249 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 4-րդ կետի «ա», «բ» ենթակետերում, որոշմամբ հաստատված հավելվածի 2.1-ին կետի «ա» ենթակետում, 2.2-րդ կետի «ե» ենթակետում, 2.3-րդ կետի «օրենքներին» բառից առաջ, «կառավարության» բառից առաջ, 2.5-րդ կետում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) որոշման 5-րդ կետում «ԼՂՀ սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

3) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 1.1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն)» բառերով.

բ. 1.3-1.4-րդ, 1.8-րդ կետերում, 3.1-ին կետի «ա» ենթակետում, 3.3-րդ կետի «զ» ենթակետում, 3.5-րդ, 3.10-րդ կետերում, 3.12-րդ կետի «բ», «է» ենթակետերում, 4.2-րդ, 8.1-ին, 8.3-րդ, 8.5-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովաձևերով.

գ. 2.1-ին կետի «բ» ենթակետում «ԼՂՀ-ում տեխնիկական» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետությունում տեխնիկական» բառերով.

դ. 2.3-րդ կետից հանել «ԼՂՀ սոցապահովության» բառերը.

ե. 3.1-ին կետի «բ» ենթակետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 6-ի «Հաշմանդամների վերականգնման բազային ծրագիրն ու դրա իրականացման կարգը հաստատելու մասին» N 98 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում՝

ա. «առողջապահության» բառից առաջ «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

բ. «ԼՂՀ սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

գ. «գործակալություն» բառը փոխարինել «կենտրոն» բառով.

դ. «ԼՂՀ սոցապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

ե. «ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի» բառերով.

2) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 1-ին, 3-4-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովաձևերով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 20-ի «Հաշմանդամներին ձեռքի կառավարման ավտոմեքենաներ տրամադրելու մասին» N 394 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում, որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ, 6-րդ կետերում, 14-րդ կետի 2-րդ պարբերությունում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովաձևերով.

2) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի՝

ա. 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով,

բ. 7-րդ կետում «սոցիալական ապահովության քարտը» բառերը փոխարինել «հանրային ծառայությունների համարանիշը և դրա պատճենը կամ վավեր սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը կամ Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից տրված՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը» բառերով:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 15-ի «Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 500-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ, 17-րդ կետերում, 30-րդ կետի 2-րդ ենթակետում, 33-րդ, 37-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) 4-րդ կետում «սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի (այսուհետ՝ տարածքային մարմին) ղեկավարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալության (այսուհետ՝ գործակալություն) պետի» բառերով.

3) 6-7-րդ կետերում, 9-րդ կետի «աշխատողը» բառից առաջ, 14-րդ, 17-րդ, 40-րդ կետերում «տարածքային մարմին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «գործակալություն» բառով և դրա հոլովաձևերով.

4) 6-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) հանրային ծառայությունների համարանիշը և դրա պատճենը կամ վավեր սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը կամ Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից տրված՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը.».

5) 8-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առնթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

6) 9-11-րդ, 19-րդ, 22-րդ կետերում «տարածքային մարմնի ղեկավար» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «գործակալության պետ» բառերով և դրանց հոլովաձևերով.

7) 17.1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) բառերը փոխարինել «նախարարություն» բառով:

6. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ